

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Նախագահ, Որ Կը Մերժէ Ընդունիլ Պարտութիւնը

Ճօ Պայտընի ընտրութիւնը որպէս Միացեալ Նահանգներու 46-րդ նախագահ դարձաւ պաշտօնակա՛ն: Երկուշաբթի օր, երկրի բոլոր՝ 50 նահանգներուն մէջ ընտրիչները հաւաքուեցան նահանգային խորհրդարաններուն մէջ կատարելու համար իրենց սահմանադրական պարտականութիւնը՝ քուէարկելով այն թեկնածուին, որ առաւելագոյն թիւով ձայներ ստացած էր իրենց նահանգին մէջ: Օրենքի պահանջ նկատուող այս քայլէն ետք վերջնականապէս հաստատուեցաւ որ, Պայտըն եւ փոխ նախագահի թեկնածու Քամալա Չարրիս ստացած են 306 ընտրական ձայն, իսկ այժմու նախագահ Տանուտ Թրամփ եւ փոխ նախագահ Մայք Փենս ստացած են 232 ընտրական ձայն:

Այսպիսով, վերջնականապէս փակուած կը նկատուի նախագահական ընտրութիւններու էջը ու կը մնայ որ յառաջիկայ Յունուար 20-ի կէսօրուայ ճիշդ 12-ին, Ճօ Պայտըն տայ իր նախագահական երդումը, այդ պահէն սկսեալ ստանձնելով երկրի ղեկավարի լիազօրութիւնները ու անցնի իր պարտականութիւններու կատարման: Մինչ այդ, կ'ակնկալուի որ, նախագահ Թրամփ դուրս եկած ըլլայ Սպիտակ Տունէն, որպէսզի Գոր նախագահը ժամանէ այնտեղ:

Անցեալին, ընտրիչներու ժողովներն ու արարողութիւնները չէիր արժանանար որեւէ ուշադրութեան, քանի որ այդ քայլերը կը նկատուէին ձեւական: Սակայն, նախագահական վերջին ընտրութիւններէն վեց շաբաթ ետք, Տանուտ Թրամփ կը շարունակէ մերժել հրապարակուած արդիւնքները ու իր պարտութիւնը, անհիմն կերպով պնդելով որ բազմաթիւ նահանգներու մէջ քուէարկութիւնները կեղծուած են:

Նոյեմբեր 3-ի ասդին, Թրամփի փաստաբանները տարբեր մակարդակներու դատարաններու մօտ ներկայացուցին յիսուսէ աւելի դատեր, որոնք բոլորն ալ մերժուեցան՝ փաստերու բացակայութեան պատճառաւ՝ նոյնիսկ Թրամփի կողմէ նշանակուած դատարաններուն կողմէ: Գործող նախագահին երկու անգամ միաձայնութեամբ մերժեց նաեւ Ամերիկայի Գերագոյն Դատարանը, որու ինքնընդմեջ վեցը նշանակուած են Հանրապետական նախագահներու կողմէ, իսկ երեքը իր իսկ կողմէ:

Արդարադատութեան թիւ մէկ պատասխանատու՝ Գլխաւոր Դատախազ Պիլ Պարր, որ կը նկատ-

«Ժողովուրդի Կողմէն Ինծի Տրուած Կարգավիճակէն Կարող Եմ Հրաժարիլ Միայն Ժողովուրդի Կամարտայայտման Հաւաստի Արդիւնքներու Հիման Վրայ».

Նիկոլ Փաշինեան

Մինչ ընդդիմադիրները կը շարունակեն Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով ցույցերն եւ երթերը կազմակերպել, Փաշինեան կը յայտարարէ, որ հրաժարական պիտի չտայ. - «Անընդհատ լուրեր են շրջանառու իմ հրաժարականի մասին, մինչդեռ յտակասել եմ, որ ժողովրդի կողմից ինձ տրուած կարգավիճակից կարող եմ հրաժարուել միայն ժողովրդի կամարտայայտման հաւաստի արդիւնքների հիման վրայ»:

Դեկտեմբեր 14-ին ունեցած ելույթով Փաշինեան անդրադարձաւ հայաստանեան ներքաղաքական գործընթացներուն՝ կառավարութեան ղեկավարը ըսաւ, որ անոնց նպատակը փակ սենեակներու մէջ խնդիրներ լուծելն է առանց ժողովուրդի կամքին. - «Կրկին ուզում եմ ընդգծել, որ կան որոշ գործընթացներ, որոնց նպատակն ակնյայտօրէն ժողովրդին, մարդկանց, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին ընդհանուր առմամբ գործընթացէն դուրս թողնելն է եւ փակ սենեակներում, բարձրաշխարհիկ միջավայրերում խնդիրներ լուծելը»:

Նիկոլ Փաշինեան մտահոգութիւն չայտնեց թէ՛ Հայաստանի սահմաններու, թէ՛ իր հրաժարականի վերաբերեալ տեղեկատու-



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան

կան հոսքերով: Իր խօսքով՝ նեղ քաղաքական շահերով պայմանաւորուած է այդ ամէնը: Փաշինեան չբացատրեց, որ այդ հոսքերու մեծ մասը կը կառավարուի արտերկրէն: Թէ՛ որ երկրէն, Փաշինեան չնշեց. - «Ապատեղեկատուութեան հսկայական հոսքեր էր դրուել շարժման մէջ: Այդ հոսքերի բաւական մեծ մասը կառավարում է արտերկրից, ու չենք կարող բացատրել դրանց առնչութիւնը օտարերկրեայ յատուկ ծառայութիւն-

ների հետ: Մի օրինակ կարող եմ բերել միայն՝ առաւօտեան լրահոսից կարող էր տպաւորութիւն ստեղծուել, թէ ողջ գիշեր Միւնխի մարզում մարտական գործողութիւններ են տեղի ունեցել, մինչդեռ ճշմարտութիւնն այն է, որ գիշերը Միւնխի քաղաքում, ինչպէս Նոյեմբերի 9-ից յետոյ ընդհանուր առմամբ բոլոր գիշերները, ռազմական առումով անցել է հան-

ԱՄՆ ԵՒ ԵՐՈՍՅԱ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՈՒՆ ԿՐ ՀԱՍՏԱՏԵՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ

Ուաշինկթըն պատժամիջոցներ սահմանեց Թուրքիոյ նկատմամբ՝ ուսական արտադրութեան C-400 հակահրթիռային համակարգերու ձեռքբերման պատճառով: Միացեալ Նահանգներու ֆինանսներու նախարարութիւնը այս մասին յայտարարեց երկուշաբթի՝ Դեկտեմբեր 14-ի ուշ երեկոյեան՝ ընդգծելով, որ պատժամիջոցները անհատական բնոյթ կը կրեն: Անոնց թիրախն են Թուրքիոյ Պաշտպանական արդիւնաբերութեան վարչութեան տնօրէն՝ Իսմայիլ Տեմիրը եւ անոր երեք ենթակայները:

Պատժամիջոցներու կիրառման առթիւ պետական քարտուղար՝ Մայք Փոմփեյժն աւելցուց. - «Հակառակ մեր նախազգուշացումներուն՝ Թուրքիան Ռուսաստանէն գնեց եւ փորձարկեց C-400 համակարգերը: Մենք չենք կրնար հանդուրժել որեւէ մեծածաւալ ձեռքբերում, որ կատարուած է Ռուսաստանի ռազմարդիւնաբերական համալիրէն»:

Ասոր հետ մէկտեղ, պետական քարտուղարը յատուկ ընդգծած է, որ Միացեալ Նահանգները հակուած է շարունակելու ռազմարդիւնաբերական համագործակցութիւնը Անգարայի հետ: Եւրոպական Միութեան ան-

դամ երկիրներու ղեկավարները եւս որոշում կայացուցած են ընդլայնելու Թուրքիոյ դէմ պատժամիջոցները՝ ի պատասխան Միջերկրական ծովի մէջ Անգարայի գործողութիւններուն:

«Եւրոպական Միութիւնը հաւատարիմ է դաշինքի եւ անդամ երկիրներու շահերու պաշտպանութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային կայունութեան պահպանման: Այդ կապակցութեամբ գազաթնամոլովը Եւրոպական Միութեան խորհուրդին կը յանձնարարէ լրացուցիչ սեւ ցուցակ կազմել Միջերկրական ծովի մէջ Թուրքիոյ ապօրինի գործողութիւններու կապակցութեամբ», - ըսուած է այս առթիւ հրապարակուած փաստաթուղթին մէջ:

Յայտարարութիւնը կ'ընդգծէ, որ Թուրքիան կը շարունակէ իր միակողմանի եւ սադրիչ գործողութիւնները, կոշտացուցած է հետտուրաբանութիւնը Եւրոպական Միութեան, դաշինքի անդամներու եւ Եւրոպացի առաջնորդներուն դէմ:

Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը այսօր հանդէս եկած է յայտարարութեամբ, ուր Եւրոպական միութեան քայլերը որակած է «կողմնակալ եւ ապօրինի»:

«Հայաստան» Հիմնադրամի Յայտարարութիւնը



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը վերստին շնորհակալութիւն կը յայտնէ իր բոլոր նուիրատուներուն, որոնք սատար կանգնեցան ու կը շարունակեն կանգնիլ հայրենիքին այս ծանր օրերուն: Խօսքը թէ՛ Սեպտեմբեր 27-ին մեկնարկած համազգային դրամահաւաքի եւ թէ՛ Նոյեմբեր 26-ին Գոհաբանութեան օրը կայացած տարեկան հեռատեսիլային մարաթոնի մասին է, որու ընթացքին հաւաքագրուեցաւ շուրջ 23 միլիոն ԱՄՆ տոլար:

Միւսնոյն ժամանակ, շնորհա-

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռուսաստանը Չի ճանաչում Ատրպեյճանի Լիարժեք Ռազմական Յաղթանակը

ԻՇԽԱՆ ՔԻՇՄԻՐԵԱՆԸ

Զինական «Մինսկում» գրում է, որ Լեռնային Ղարաբաղում գինադադարը հաստատուել է Ռուսաստանի միջնորդութեամբ: Դառնալով միակ երկիրը, որը տարածաշրջան խաղաղապահներ մտցնելու իրաւունք է ձեռք բերել, նա ազդեցութեան լծակներ է ձեռք բերել Անդրկովկասի աշխարհաքաղաքականութեան վրայ: Հակամարտութիւնը դադարեցուած է, եռակողմ համաձայնագիրը՝ ստորագրուած, սակայն խնդիրների արմատը դեռ լուծուած չէ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համախաղաղահանդէս Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի արտաքին գործերի նախարարները եւ նրանց տեղակալները վերջերս հանդէս են եկել համատեղ յայտարարութեամբ, որում արտասահմանեան վարձակազմերին կոչ են արել անմիջապէս հեռանալ Լեռնային Ղարաբաղից: Երեք երկրները Հայաստանին ու Ատրպեյճանին յորդորել են կրակի դադարեցման ռեժիմն օգտագործել բանակցութիւնների համար՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գլխավորութեամբ երկարաժամկէտ ու կայուն խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու համար, ինչպէս նաեւ դիմում են միջազգային հանրութեանը, ներառեալ՝ ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտէին՝ խնդրելով կոնկրետ միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղում եւ յարակից տարածքներում մարդասիրական իրավիճակը ընդհանուր համաձայնեցուած մօտեցման միջոցով բարելաւելու համար:

Դիտորդները նշել են, որ կարծիքները, թէ ով է «յաղթել կամ պարտուել զարաբաղեան հակամարտութիւնում», բաժանուել են: Ատրպեյճանը գրաւեց Արցախի տարածքի մեծ մասը: Հակամարտութեան կողմերից թուրքիան, չնայած որոշակիօրէն յաղթող դուրս եկաւ Ատրպեյճանին ակնյայտ աջակցութեան շնորհիւ, ակի-

ստուած է, որ չկարողացաւ մտնել տարածաշրջան, իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համախաղաղահանդէս Ֆրանսան ու ԱՄՆ-ն, ընդհանուր առմամբ, շատ քիչ նպաստեցին հակամարտութեան լուծմանը: Ռուսաստանը, ընդհակառակը, ոչ միայն «վճռականօրէն» առաջ մղեց կրակի դադարեցման ռեժիմը, այլեւ դարձաւ միակ երկիրը, որին Ատրպեյճանը, Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը թոյլատրեցին խաղաղապահի դերում մուտք գործել տարածաշրջան: Այդպիսով՝ նա անդրկովկասեան տարածաշրջանի վրայ ազդեցութեան լծակներ ձեռք բերեց:

Անդրկովկասում Հայաստանը Ռուսաստանի գլխավորած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան՝ ՀԱՊԿ-ի, Եւրասիական տնտեսական միութեան ու ԱՊՀ-ի պաշտպանութեան հակաօդային միացեալ համակարգի անդամ է եւ համարում է Ռուսաստանի դաշնակիցը: Լեռնային Ղարաբաղում պատերազմի ընթացքում Ռուսաստանը դէ ֆակտո «չէզոք» մնաց: Նա հրապարակաւ յայտարարեց, որ միայն Հայաստանի վրայ յարձակման դէպքում ռուսական բանակը կը կարողանայ կատարել ՀԱՊԿ անդամ պետութեան անվտանգութիւնն ապահովելու իր պարտաւորութիւնները, իսկ Լեռնային Ղարաբաղ գործեր մտցնելու համար անհրաժեշտ է Հայաստանի եւ Ատրպեյճանի համատեղ «հրաւէրը»:

Մասնաւոր հայեացք նետելով իրավիճակին՝ կարելի է ասել, որ «չէզոքութեան» պահպանումն առաւելագոյնի հասցրեց Անդրկովկասում Ռուսաստանի օգուտները: Վերջին տարիներին Ատրպեյճանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմական եւ տնտեսական կապերը սերտացել են, օգնութիւնը Հայաստանին եւ հարուածն Ատրպեյճանին չէին համապատասխանում ՌԴ-ի շահերին: Կարծիքներ են հնչում, որ եթէ Ռուսաստանի ռազմական ուժը ներգրաւուած լինէր զարաբաղեան հակամարտութեան մէջ, ապա այն

ոչ միայն կը դիմակայէր թուրքիային, այլեւ կարող էր առաջացնել ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի հասարակական կարծիքի մեղադրանքներ, ինչն էլ աւելի կը վատթարացներ Ռուսաստանի միջազգային ու տարածաշրջանային դիրքերը:

Որպէս խոշոր եւրասիական եւ նոյնիսկ համաշխարհային տեղութիւն՝ Ռուսաստանը չէր կարող չաւերժ «լուել» եւ թոյլատրել նոր մարդասիրական աղէտներ Անդրկովկասում:

Նոյեմբերի 8-ին ատրպեյճանցիները գրաւեցին Շուշին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտից ընդամենը 15 քիլոմէթր հեռավորութեան վրայ գտնուող ռազմավարական նշանակութեան քաղաքը, ինչը յարուցեց Ռուսաստանի հասարակութեան բողոքը: Երբ Նոյեմբերի 9-ին Հայաստանի օդային տարածքում ատրպեյճանական զինուած ուժերը խոցեցին ռուսական «Մի-24» ուղղակի թիւը՝ սպանելով անձնակազմի երկու անդամի եւ վիրաւորելով մէկին, դա անմիջապէս յանգեցրեց նոյն օրը եռակողմ հայտարարութեան անյապաղ հրապարակմանը:

Ղարաբաղեան հակամարտութիւնում ուժեղ միջամտութիւնը ոչ միայն նպաստեց Հայաստանում ու Ատրպեյճանում, Եւրասիայի շրջաններում ու նոյնիսկ աշխարհում Ռուսաստանի հեղինակութեան ամրապնդմանը, այլեւ ձեռք բերեց իրական աշխարհառաջնակարգ նշանակութիւն: Ռուսաստանի միջնորդութիւնը տարածաշրջանային հակամարտութիւնում ստացել է Հայաստանի եւ Ատրպեյճանի դեկավարների միաձայն հաւանութիւնը, ունի իրաւական հիմք եւ բարոյական բարձր սկզբունքներ: Սա ոչ միայն վերջ տուեց զանգուածային արիւնալի հակամարտութեանը, որի հետեւանքով գոհուեց աւելի քան 5 հազար մարդ, վիրաւորուեց շուրջ 10 հազար մարդ, այլեւ պայմաններ ստեղծուեցին հայատրպեյճանական բնականոն յարաբերութիւնների վե-

րականգնման եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական լուծման համար: Ինչպէս ասել է Փոլթինը, Ռուսաստանի համար, որը հարիւր տարի սերտ կապեր է պահպանում Հայաստանի ու Ատրպեյճանի հետ, «տարածաշրջանում հակամարտութեան կարգաւորումն ունի յատուկ նշանակութիւն, յատուկ իմաստ եւ յատուկ դեր»:

Ռուսաստանն սկսել է փրկարարական գործողութիւններ իրականացնել տարածաշրջանում, ինչը մարմնաւորում է հումանիզմի բարձր ոգին: Նոյեմբերի 20-ին պաշտօնապէս շահագործման է յանձնուել ՌԴ ՊՆ մարդասիրական արձագանքման միջգերատեսչական կեդրոնը, որը կը կատարի իր առջեւ դրուած խնդիրները Լեռնային Ղարաբաղում խաղաղ կեանքը վերականգնելու համար: Մասնաւորապէս, փախստականներին օգնել՝ վերադառնալու հայրենի քաղաքներ, վերականգնել հիմնական ենթակառուցուածքները քաղաքացիների համար, հումանիտար օգնութեան միջոցների բաշխումը, օգնել համապատասխան ստորաբաժանումներին Հայաստանում ու Ատրպեյճանում՝ միջազգային մարդասիրական կազմակերպութիւնների հետ համագործակցութեամբ եւ հումանիտար օգնութեան ցուցաբերման այլ խնդիրների կատարում: Ներկայումս Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւնը սերտօրէն համագործակցում է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագոյն

Շար.ը էջ 12

Ձարթնեցին Քնից, Թէ Բա՝ Սեդիատեռոր

ԱՐԻՍ ՎԱՂԱՐՇԱԿԵԱՆ

Իշխանութիւնները զարթնել են լեթարգիական քնից: Մտահոգուած եւ տարակուսած են՝ ինչպէս կարելի է սեփական երկրի դէմ մեղրա տեռոր իրականացնել: Այն, ինչ ասում էր ժողովրդի 90 տոկոսը, իշխանութիւնները նոր են հասկացել:

Մի քանի օր է, ինչ յայտնի շրջանակները անցել են կոնկրետ մեղրա ահաբեկչութեանը: Նրանց հետ նոյն գործին են լծուել նաեւ ռուսական պրոպագանդան սպասարկող որոշակի շրջանակներ: Այս նոր դրսեւորման պատճառն այն է, որ 17-ի բլից-կրիզը տապալուեց, նրանք ոչ միայն չեն կարողանում աւելացնել ցուցարարների թիւը, այլ նաեւ կորցնում են եղածը: Ուստի նոր մարտավարութիւն է անհրաժեշտ՝ իրենց վերահսկողութեան տակ գտնուող մեղրիաների միջոցով յուսահատութեան միջնորդ տառաջացնել: Սա իր հերթին նարաւորութիւն կը տայ յեղաշրջում իրականացնել՝ դա բացատրելով ժողովրդի անվտանգութիւնը պահպանելու նկատառումներով:

Երբ մի քանի օր շարունակ անընդհատ տեղեկութիւններ են տարածուում, որ Սիւնիքը վտանգի տակ է, որ գործող իշխանութիւնը մտադրուած է յանձնել այդ երկրամասը, ուրանից յետոյ շատ քչերին է սկսում հետաքրքրել, թէ իշխանութիւնները ինչ ճանապարհով հեռացան՝ սահմանադրակա՞ն, թէ՞ ոչ այնքան:

Յեղաշրջում կ'իրականացնեն, իսկ նոր իշխանութիւնների բալանսում յաղորդութիւն կը գրանցեն՝ չյանձնեցին Սիւնիքը: Վերադառնանք իշխանութիւններին: 2.5 տարուայ ընթացքում նրանք մատը մատին չխփեցին, որպէսզի դիմակայեն նախկինների մեղրա տեռորին: Այնքան ապաշնորհ գտնուեցին, որ չօգտագործեցին իրենց վերահսկողութեան տակ գտնուող ամենամեծ մեղրա ռեսուրսի՝ Հ1-ի ամբողջ ներուժը: Ամենամեծ արխիւին տիրապետող լրատուամիջոցը չպատրաստեց զէթ մէկ ֆիլմ նախկին-

ների յանցագործութիւնների մասին, հանրութեանը չներկայացրեց, թէ օրինակ ինչպէս է յայտնի փեսան դարձել մեղրա մագնատ: Բացառիկ անախատուականութիւն էր պէտք դա չանելու համար:

Եւ հիմա, իրենց բնութեանը յատուկ, դժգոհում են, թէ այս ի՞նչ մեղրա տեռոր է, ինչպէ՞ս կարելի դա անել սեփական ժողովրդի ու պետութեան հետ: Մինչդեռ իրենք ոչինչ չեն արել ժողովրդին պաշտպանելու այդ մեղրա տեռորից:

Թերեւս առաջիկայում ժողովրդին կը մեղադրեն, որ մեղրա-ասանգրագիտութիւնը իրենց գլխի մէջ է, եւ իրենք են մեղաւոր, որ ամէն տեսակ մեղրա կեղծիք են կարողում:

Իսկ այդ ընթացքում յայտնի ուժերը վերջնականապէս կը բարոյալքեն ժողովրդին ու պետութիւնը:

«ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անալոյսմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբեր 19-ին Հայաստանի եւ Արցախի Մէջ Կը Յայտարարուի Եռօրեայ Սուգ

Դեկտեմբեր 19-ին կը լրանայ ռազմական գործողութիւններու աւարտի 40-րդ օրը եւ այս կապակցութեամբ Դեկտեմբեր 19-ին Հայաստանի Հանրապետութեան մէջ եռօրեայ սուգ կը յայտարարուի, այսօր՝ Դեկտեմբեր 14-ին ուղիղ տեսակապի միջոցով յայտարարեց վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան:

Ան նշեց, որ Դեկտեմբեր 19-ին յիշատակի երթ պիտի կազմակերպուի Հանրապետութեան հրապարակէն դէպի Եռօրեայ զիտուրական պանթէոն, տեղի պիտի ունենան յիշատակի այլ միջոցառումներ:

«Հնարաւոր է, որ ոչ բոլոր նահատակների մարմինները յայտնաբերուած կը լինեն այդ օրուայ դրութեամբ, կ'ունենանք չճանաչուած բազմաթիւ մարմիններ, բայց պետական այս կարգի որոշումը, կարծում եմ, այլեւս չի կարելի

յետաձգել», - յայտարարեց Փաշինեան:

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան կը տեղեկացնէ, որ հաշուի առնելով, որ Դեկտեմբեր 19-ին կը լրանայ 44-օրեայ պատերազմի զինադադարի 40-րդ օրը, Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի հետ պայմանաւորուած են, որ Արցախի եւ Հայաստանի մէջ այդ օր յայտարարել եռօրեայ սուգ՝ ոգեկոչելու Հայրենիքի պաշտպանութեան համար զոհուածներու յիշատակը:

«Նրանց անունները յաւանդու են մեր սրտերում եւ հայոց պատմութեան էջերում՝ պարտաւորեցնելով մեզ հետագայ երթում շարունակել նրանց հայրենանուէր գործը: Ուստի, այն լինելու է ցաւի, հպարտութեան ու պարտաւորութեան սուգ հայ ազգի համար», - դիմատետրեան իր էջով գրած է Արցախի նախագահը:

Ալեն Սիմոնեանի Կարծիքով Անհանգստանալու Պատճառ Կայ

Աժ փոխնախագահ Ալեն Սիմոնեան լրագրողներու հետ ձեպագրուցին ընթացքին անդրադարձաւ տարածուած տեսանիւթին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեանի անվտանգութիւնը ապահովող թիկնապահը ինքնաշարժէն զէնք ուղղած էր:

«Խուճապի մէջ են այն մարդիկ, ովքեր մտածում են, որ դա խուճապ է: ՀՀ-ն գտնուում է փաստացի պատերազմական դրութեան մէջ, ինչպէս նաեւ 2 անգամ իրավիճակ է եղել, օրինակ՝ Ազգային ժողովի նախագահին փորձել են սպանել ընդամէնը օրեր առաջ, ինչպէս նաեւ զնացել մտել են կառավարութեան շէնք եւ վարչապետի տուն: Այսինքն՝ դուք համարում էք, որ անհանգստանալու որեւէ բան չկա՞, երբ մենք ունենք Ատրպէյճան եւ նման լարուած իրավիճակ», - ըսաւ Սիմոնեան:

Ան նշեց որ 17 կուսակցու-



Աժ փոխնախագահ Ալեն Սիմոնեան

թիւններու անդամներն ալ թիկնապահներով կը շրջին: «Պարոն Վանեցեանը 6 թիկնապահով է հանրահաւաքին գալիս, ինչո՞ւ իրենից չէք հարցնում: Մենք խօսում ենք փաստացի երկրի ղեկավարի մասին, որը պատերազմական դրութեան մէջ է գտնուում», - աւելցուց Սիմոնեան:

Կուսակցութիւններու Մասին Օրէնքի Նախագիծը Ընդունուեցաւ Առաջին Ընթերցմամբ

ՀՀ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունեց «Կուսակցութիւններու մասին» սահմանադրական օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին եւ յարակից օրէնքներու փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու բուն քննարկման արժանացած օրէնսդրական փաթեթը: «Արմէնիան»-ի հարողմամբ՝ փաթեթով կը նախատեսուի հեշտացնել կուսակցութիւններու գրանցման եւ ստեղծման ընթացակարգերը:

«Նախատեսուած են էական փոփոխութիւններ, ազատականացում ու հեշտացում կուսակցութիւնների գրանցման եւ ստեղծման հետ կապուած: Շատ կարեւոր ուղղութիւն է կուսակցութիւնների ներսում ներքին ժողովրդավարութեան մեքենականութիւնների ընդունումը, այդ թւում՝ նաեւ, օրինակ՝ համագումարի լիազօրութիւնների ընդլայնումը, որոշումների կայացման փակ, գաղտնի ռեժիմի աւելացումը, որպէս օրէնքի պահանջ», - նախագծի ներկայացման

ընթացքում ըսաւ «Իմ քայլը» խմբակցութեան անդամ Համազասպ Դանիէլեանը:

Նախագծի առանցքային նպատակը Հայաստանի Հանրապետութեան մէջ աւելի առողջ քաղաքական դաշտ ունենալն է, այնպիսի կուսակցական համակարգ ունենալն է, ուր կուսակցութիւնները կ'ըլլան պակաս ապագադափարական, պակաս անձակեղրոն, կ'ըլլան հաշուետու եւ թափանցիկ:

Համազասպ Դանիէլեան նշեց, որ փոփոխութիւնները կը նպաստեն, որպէսզի կուսակցութիւնները ըլլան ֆինանսական առումով առաւել թափանցիկ եւ հաշուետու:

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը քուէարկութեանն առաջ նշեց, որ իրենք այս փուլին կողմ կը քուէարկեն նախագիծին, սակայն մինչեւ երկրորդ ընթերցում այն պէտք է որոշակի փոփոխութիւններու ենթարկուի:

Օրէնքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունուեցաւ 99 «կողմ» եւ 1 «դէմ» ձայներով:

Արտաէրթ Ընտրութիւններուն Կը Դիմուի, Եթէ Հանրային Պահանջ Ըլլայ

Հակառակ ընդդիմութեան օրական ցուցերուն եւ անհնազանդութեան գործողութիւններուն՝ իշխանական պատգամաւորները կը կարծեն, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան պէտք է հրաժարական տայ եւ իր գլխաւորած կառավարութիւնն ալ պէտք է կալուսացնէ երկրի մէջ ստեղծուած իրավիճակը:

Իշխող «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Բաբկէն Թունեան չի ժխտեց, որ իշխանութեան նկատմամբ հանրութեան վստահութիւնը նուազած է, բայց եղած քաղաքական ուժերէն վստահելին, ըստ պատգամաւորին, կը շարունակեն մնալ իրենք:

«Եթէ, օրինակ, էդ իշխանութիւնը գնաց, կամ էդ վարչապետը գնաց, յետոյ ո՞վ է գալու, ի՞նչ է անելու ու ի՞նչ ճանապարհային քարտէզ ունի, ես էդ հարցի պատասխանը որեւէ մէկից հանգամանալից չեմ լսել», - «Ազատութիւն»-ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ Թունեան:

Պատգամաւորը համամիտ է, որ փողոցը պայքարող 17 կուսակցութեանէն բացի նաեւ ուժեր կան, որ կը պահանջեն Փաշինեանի հրաժարականը, բայց իշխանութեան կողմնակիցներն ալ, ըստ իրեն, քիչ չեն: Փաշինեանի հրաժարականը պահանջողներն են շատ, թէ՛ կողմնակիցները, այս պահուն, պատգամաւորի խօսքով, դժուար է յստակ որոշել:

«Մենք կուսակցով էք կարծիքների մասին դատողութիւն անում ենք ըստ մամուլում, կամ համացանցներում աշխուժութեան: Այսօր



«Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Բաբկէն Թունեան

համացանցներում ու մամուլում աւելի աշխուժ է այն մասսան, որը որ պահանջում է կտրուկ գործողութիւններ», - ըսաւ Թունեան:

Հարցին, թէ ինչո՞ւ իշխանութիւնը չի ցանկար հանրութեան տրամադրութիւնները որոշել սահմանդրական ճանապարհով՝ արտահերթ ընտրութիւններու միջոցով, Բաբկէն Թունեան պատասխանեց, որ սխալ կը համարուի այս պահուն ընտրութիւնները, թէեւ ընդդիմախօսներու տրամաբանութիւնը, որ պարտուած վարչապետը խոցելի է եւ չի կրնար բանակցել, հասկանալի կը համարէ:

«Կարծում եմ, որ էս պահին արտահերթ ընտրութիւններ անելը սխալ է, եթէ հասարակական պահանջ կը լինի, էդ քայլին անպայմանօրէն կը գնանք», - ըսաւ պատգամաւորը:

Համայնքները Չայրացած են Իրենց Անունով Տարածուած Յայտարարութիւններէն

Թումանեանի համայնքապետ՝ Լեւոն Զաւարեան համայնքապետարանի բոլոր 28 աշխատակիցներու անունով իր դիմատետրի էջով յայտարարութիւն տարածած էր վարչապետի հրաժարականի պահանջին միանալու մասին:

Յայտարարութեան մէջ համայնքապետը նշած է. «Թումանեանի հանայնքապետարանի աշխատակազմը եւս միանում է Սիւնիքի, Շիրակի եւ միւս մարզերի համայնքների կոչին՝ պահանջելով վարչապետի հրաժարականը, փրկելու Հայաստանի եւ հայ ժողովրդի պատիւն ու արժանապատուութիւնը»:

Թումանեանի բնակավայրեր հանդիսացող՝ Շամուտ, Աթան եւ Ահնիձոր բնակավայրերու վարչական ղեկավարները, որոնք եւս համայնքապետարանի աշխատակազմի անդամներ են, ըսին, որ ոչ միայն նման յայտարարութիւն ընելին առաջ համայնքապետարանէն ներս չեն հարցուցած իրենց կարծիքը, այլեւ համայնքի ղեկավարն ու անոր ենթակաները վստահ եղած են, որ իրենք վարչապետի հրաժարականի պահանջ չունին:

«Մարդիկ դէմ չեն մեր ներկայիս վարչապետի կառավարմանը, մարդիկ կողմնակից են Փաշինեանին», - ըսաւ Աթանի վարչական ղեկավար՝ Կարեն Քառեան:

Իսկ Ահնիձորի վարչական ղեկավար՝ Հայկ Քառեան աւելցուց. - «Զգրեմ դիմատետրի էջում իմ անունը նշել են թէ չէ, բայց ես պարոն Փաշինեանի կողմնակից եմ,

ու դա էլի ասուել ա»:

Աւագանիի նախկին անդամ՝ Տիգրան Մխիթարեան, որ հրաժարած էր աւագանիի անդամութեան համայնքի ղեկավարի հետ ունեցած անհամաձայնութիւններու պատճառով, վստահ է, որ Լեւոն Զաւարեան չէ արտայայտած ոչ միայն համայնքի բնակիչներու մեծամասնութեան, այլ նոյնիսկ համայնքապետարանի բոլոր աշխատակիցներու կարծիքը. - «Մարդկանց ահուելի մեծամասնութիւնը, ես դա կարող եմ ասել 70 եւ աւելի տոկոսի մասին, իրանք կողմ չեն վարչապետի հրաժարականին կամ, ասենք, կառավարութեան հրաժարականին: Իսկ էս դէպքում դառնում ա, որ համայնքի ղեկավարի պաշտօնը զբաղեցնող մարդը ժողովրդից կտրուած յայտարարութիւն ա կատարել»:

Սպիտակի համայնքապետարանի պաշտօնական էջով եւս վարչապետի հրաժարականի պահանջին միանալու մասին յայտարարութիւն տեղադրուած էր համայնքի ղեկավարի եւ աւագանիի 6 անդամի անունով: Այս յայտարարութիւնը դժգոհութեան ալիք բարձրացուցած է Սպիտակի մէջ:

Սպիտակցիները իրար ետեւէն յայտարարութիւնը դատապարտող գրառումներ կ'ընեն իրենց դիմատետրի էջերով: Յայտարարութիւն տարածուեցաւ, որ վաղը բնակիչները համայնքի ղեկավար՝ Գագիկ Սահակեանի հրաժարականի պահանջով բողոքի հաւաքներ կը սկսին:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետի խօսնակ. «Խստորէն Կը Դատապարտենք Ատրպէյճանի Ղեկավարի Յնչեցուցած Սադրիչ Յայտարարութիւնները».

ՀՀ վարչապետի մամլոյ քարտուղար՝ Մանէ Գէորգեան անդրադարձած է Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւի եւ Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեփ Թայէպ Էրտողանի՝ Պաքուի մէջ հնչեցուցած յայտարարութիւններուն:

«Արմէնփրես»-ի հետ զրոյցի ընթացքին, Գէորգեան մասնաւորապէս նշած է. «Խստորէն դատապարտում ենք այսօր Պաքուում Ատրպէյճանի ղեկավարի հնչեցրած սադրիչ յայտարարութիւնները: Հայաստանի հանդէպ տարածքային նկրտումների վերաբերեալ բարձրաձայնումը լրջագոյն կասկածի տակ է դնում Ատրպէյճանի պատրաստակամութիւնը խաղաղութեան հաստատման արցունքով եւ նպատակաւորութեամբ վտանգում է տարածաշրջանային խաղաղութիւնը եւ անվտանգութիւնը»:



ՀՀ վարչապետի մամլոյ քարտուղար՝ Մանէ Գէորգեան

նութեան», - ընդգծած է Մանէ Գէորգեան:

Ան նշած է նաեւ, որ խիստ դատապարտելի է Հայոց ցեղասպանութեան «ճարտարապետների՝ երիտթուրքական գաղափարասունքի փառաբանումը Թուրքիոյ նախագահի կողմից»:

«Նման դրսեւորումները կասկածի տակ են դնում Թուրքիոյ յայտարարութիւնները՝ այդ թւում տարածաշրջանային խաղաղութեան եւ կայունութեան հաստատմանը նպաստելու պատրաստակամութեան վերաբերեալ», - յայտարարած է վարչապետի խօսնակը:

Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւը Դեկտեմբեր 11-ին Պաքուի մէջ կայացած ռազմական շքերթի ընթացքին, Թուրքիոյ լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի տարածքային ձեռքբերումները, անդրադարձած է նաեւ Հայաստանի տարածքին՝ պնդելով, թէ Չանգեզուրը, Երեւանը, Սեւանը նոյնպէս ատրպէյճանական պատմական հողեր են, ուր դարերով ատրպէյճանցիներ բնակած են:

Երեւան Ժամանեցին Ատրպէյճանի Կողմէ Գերի Պահուած 44 Հայեր



Հայ գերիները կը վերադառնան Երեւան

Երկուշաբթի, Դեկտեմբեր 14-ի ուշ երեկոյեան Երեւան Ժամանեցին Ատրպէյճան գերեզարուած 44 հայ գերիներ: «Էրեբունի» օդակայանին մէջ Արցախի նախագահ՝ Արայիկ ԅարութիւնեանի եւ Հայաստանի փոխվարչապետ՝ Տիգրան Աւինեանի հետ զիրենք կը դիմաւորէին նաեւ հարազատները: Անոնք սրտատրոփ կը սպասէին, որ պիտի լսեն իրենց որդիներու, հայրերու եւ ամուսիններու անունները: Հաւաքուածներու միակ ցանկութիւնն էր՝ օր, ժամ, րոպէ առաջ իրենց հարազատները հասնին տուն:

Թացքի, որու համար Արցախի իշխանութիւններու անունով յայտնած է բոլոր ջանքերը ներդնելու պատրաստակամութիւն:

«Վերահաստատում եմ, որ այնպիսի կորած մեր բոլոր հայրենակիցների ճակատագրերի պարզումը, գոհուածների մարմինները գտնելն ու հարազատներին փոխանցելը շարունակում է մնալ մեր օրակարգի ամենահրատապ հարցը», - ըսած է Արցախի նախագահը:

Դեկտեմբեր 14-ին, ռուս խաղաղապահներու միջնորդութեամբ տեղի ունեցած է գերիներու փոխանակման գործընթացք. Ատրպէյճանէն Հայաստան տեղափոխուած այն 44 հայ գերիները, որոնց գերեզարուած ըլլալու փաստը հաստատուած է Ատրպէյճանի եւ Կարմիր խաչի կողմէ:

Հայաստանը Ատրպէյճանին փոխանցած է 12 գերիներ:

Սէկ Սիլիոն Հարիւր Հազար Տոլար՝ Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամին



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը «Մենք Ենք, Մեր Սահմանները» դրամահաւաքի շրջագիծէն ներս հանգանակուած գումարներէն Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամին կը փոխանցէ 1 մլն 100 հազար ԱՄՆ Տոլար գումար:

Ճանութիւն եղած է, կամ փոխանցման նպատակը յատուկ նշուած է եւ եղած է խնդրանք՝ գումարը փոխանցել Զինծառայողներու Ապահովագրութեան Հիմնադրամ, ինչ որ իրականացուած է:

Այս գումարի 932,892 ԱՄՆ Տոլարը հանգանակուած եւ Հիմնադրամին տրամադրած է ՕneArmenia կազմակերպութիւնը, իսկ 100,000. Հիմնադրամի Մոնրեալի տեղական մարմինը, մնացած գումարը՝ 67,108 ԱՄՆ Տոլար, փոխանցումներ եղած են անհատ նուիրատուներու կողմէ:

Հիմնադրամը կը շարունակէ աջակցիլ նաեւ վերաւոր զինծառայողներու բուժման եւ առողջութեան վերականգնման տարբեր ծրագիրներուն:

Սփիւռքի տարբեր համայնքներէն ներս կը շարունակուին հայրենիքին սատարման եւ արցախցիներուն օգնելու նպատակով դրամահաւաքները: Վերջինը Արժանութիւնի մէջ մի քանի օր առաջ սկսած Ֆոնէթոնն էր, որու արդիւնքները շուտով կ'«ամփոփուին»:

Բոլոր պարագնելուն ալ նուիրատուներու հետ նախապէս համա-

ԱՄՅ 315 Սիլիոն Տոլար Կը Յատկացնէ Հայաստանին

Արժոյթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր Խորհուրդը հաստատած է Հայաստանի հետ համատեղ եռամեայ ծրագրի գնահատման երրորդ փուլի արդիւնքները, որու հետեւանքով երկրին համար շուրջ 36,7 միլիոն տոլար ծաւալով պիւտճէտային միջոցներ: Համատեղ ծրագրին ներքոյ յատկացուած են 231,657 միլիոն շուրջ 315 միլիոն տոլար ընդհանուր ծաւալով վարկային միջոցներ:

յունութիւնը ապահովելու համար՝ պահպանելով փոխարժէքի ճկունութիւնը գնաճի նպատակադրման ծիրէն ներս ցնցումները կ'ընկնէին համար:

Չնայած, որ ֆինանսական համակարգը ճնշուածութեան նշաններ ցոյց չէ տուած, Կեդրոնական դրամատունը պէտք է շարունակէ բացայայտել ֆինանսական համակարգէն ներս առկայ հնարաւոր խոցելիութիւններն ու վտանգները եւ պատրաստ ըլլալ ձեռնարկել համապատասխան գործողութիւններ՝ ֆինանսական կայունութիւնը ապահովելու համար:

«ԱՄՀ Խորհուրդի անդամները դրական արձագանգած են այն հանգամանքին, որ ընկերատնտեսական ցնցումները նշանակալի բացասական ազդեցութիւն չեն թողած ֆինանսական համակարգին վրայ: Վերջիններու դիտարկմամբ՝ ֆինանսական ոլորտի բարեփոխումները, որոնց մէկ մասը դեռեւս ընթացքի մէջ են, կը նպաստեն տնտեսական վերականգնման եւ երկարաժամկետ աճին», - նաեւ ըսուած է հաղորդագրութեամբ:

Ինչպէս կը հաղորդէ Հայաստանի Կեդրոնական Դրամատան հասարակայնութեան հետ կապերու ծառայութիւնը, ԱՄՀ-ի գնահատմամբ՝ դրամավարկային քաղաքականութիւնը եղած է ըստ անհրաժեշտութեան ընդլայնողական՝ աջակցելով տնտեսութեան եւ պահպանելով դրամատնային համակարգի իրացուելիութիւնը, իսկ գնաճը պահպանուած է ցած մակարդակի վրայ: Այնուամենայնիւ, Կեդրոնական Դրամատունը պէտք է ուշադիր հետեւի շուկաներու զարգացումները եւ պատրաստ ըլլալ անհրաժեշտութեան պարագային ճշգրտել դրամավարկային քաղաքականութիւնը, տնտեսութեան կա-

Անհրաժեշտ է Մինսքի խումբի Ձեռագրված Ղարաբաղեան Բանակցութիւններու Վերականգնումը. Փաշինեան



ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու հանդիպումը Պալատային վարչապետին հետ

Հայաստան անհրաժեշտ կը համարէ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեռագրուած զարաբաղեան բանակցութիւններու վերականգնումը, հիմնախնդրի համապարփակ կարգաւորման նպատակով, Դեկտեմբեր 14-ին, Երեւանի մէջ ընդունելով համանախագահները, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

44-օրեայ պատերազմէն յետոյ, այս համանախագահներու առաջին այցելութիւնն էր տարածաշրջան:

Կառավարութեան լրատուական ծառայութեան հաղորդմամբ՝ «վարչապետը որպէս առաջնահերթութիւն ընդգծել է Արցախի կարգավիճակի յստակեցումը՝ հաշուի առնելով արցախցիներէ ինքնորոշման իրաւունքի իրացման սկզբունքի կարեւորութիւնը, Արցախի՝ Ատրպէյճանի կողմից գրաւուած տարածքներու ազատագրումը, արցախահայութեան՝ սեփական բնակավայրեր անվտանգ վերադարձի համար պայմանները ապահովումը, կրօնական ու մշակութային ժառանգութեան պահպանումը»:

Փաշինեան նաեւ դատաւարութեան հետ կապուած խախտումը Ատրպէյճանի կողմէն Դեկտեմբեր 11-12-ին, արցախատարապէյճանական շփման գծին վրայ:

Օր մը առաջ, Պաքուի մէջ նախագահ Իլհամ Ալիեւի, եւ ապա վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ

հանդիպումներու ընթացքին կը բացակայէր ԵԱՀԿ Մինսքի խումբի ռուսաստանցի համանախագահ՝ Իկոր Փոփովը: Պաքուի մէջ զինք կը փոխարինէր Ատրպէյճանի մօտ Ռուսաստանի դեսպան՝ Միխայիլ Պոչարնիքովը, իսկ Երեւան՝ Ռուսաստանի դեսպանութեան գործերու ժամանակաւոր հաւատարմատար՝ Ալեքսեյ Սինեկուպովը:

Ինչպէս յայտնի է, Ալիեւ բաւական սառ ընդունած էր համանախագահները՝ յայտարարելով, որ անոնց այցը Պաքու իրենց սեփական նախաձեռնութիւնն է, ինքը զիրենք չէ հրաւիրած եւ որ Ատրպէյճանի զարաբաղեան ինդիքը լուծած է ռազմական ճանապարհով, իսկ Մինսքի խումբը ոչինչ ըրած է անցեալ 28 տարիներու ընթացքին:

Համանախագահները ընդունած էր նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արա Ալվազեանը: Նախարարը ներկայացուցած է հայկական կողմի առաջնահերթութիւնները՝ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի հիման վրայ Արցախի կարգավիճակի հաստատումը, Ատրպէյճանի կողմէն գրաւուած Արցախի տարածքներու ազատագրումը, արցախահայութեան՝ սեփական բնակավայրեր անվտանգ վերադարձի համար պայմաններու վերադարձի համար պայմաններու ապահովումը եւ կրօնական ու մշակութային ժառանգութեան պահպանումը:

Պալատային Տնտեսութեան Անկումը Կը Խորանայ

Հայաստանի տնտեսութեան անկումը կը խորանայ: Վիճակագրական կոմիտէի հրատարակած տուեալներուն համաձայն՝ այս տարուայ առաջին տասը ամիսներուն նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը անկում ապրած է 6,7 տոկոսով, եւ այս 2020 թուականի ամենավատ ցուցանիշն է: Օրինակ՝ առաջին ինը ամիսներուն այդ անկումը 6,6 տոկոս էր, ութ ամիսներուն՝ 6,4, եօթ ամիսներուն՝ 5,7, եւ այդպէս աւելի ու աւելի քիչ:

Իսկ անկումը սկսած է այս տարուայ առաջին չորս ամիսներէն սկսեալ, երբ Յունուար-Ապրիլ ժամանակահատուածին տնտեսական աշխուժութեան ցուցանիշը նահանջ ապրեցաւ 1,4 տոկոսով: Ազգային ժողովի ֆինանսա-

վարկային եւ պիւտճետային հարցերու մշտական յանձնաժողովի փոխնախագահ, «Իմ քայլը» խմբակցութեան Արտակ Մանուկեան «Ազատութիւն»-ի հետ գրոյցի ընթացքին, որպէս պատճառ նշեց «Քորոնա» ժահրն ու 44-օրեայ պատերազմը:

«Այս ամէնով հանդերձ, մենք կարող ենք պնդել, որ տնտեսական անկումը Հայաստանի Հանրապետութիւնում 2020 թուականին կը լինի մօտաւորապէս 7-8,5 տոկոսի շրջանակներում: Եւ եթէ մենք դիտարկում ենք՝ ինչով է դա պայմանաւորուած, դա նաեւ պայմանաւորուած է որոշակիօրէն Նոյեմբեր ամսի համեմատաբար աւելի կրակորակային լինելու կանխատեսումներով կամ մօտեցումներով», - ըսաւ Մանուկեանը:

Իրանցի Լրագրողը Կախաղան Բարձրացաւ

Associated Press գործակալութեան Տուպայի թղթակիցի հաղորդագրութեան համաձայն՝ անցեալ շաբաթ կախաղան հանուելու վճիռը գործադրուած է աքսորական առցանց ընդդիմադիր լրագրող 47 ամեայ Ռուհայլա Ջամի դէմ: Ան 2017 թուականին, իր լրատուութիւններով օգնած էր բովանդակ երկրէն ներս տնտեսական համատարած բողոքի շարժումին: Այնուհետեւ Իրաք ապաստանելով ի վերջոյ ձերբակալուած էր: Նախապէս բնակութիւն հաստատած էր Փարիզի մէջ եւ ապահոված ֆրանսական իշխանութիւններու պաշտպանութիւնը: Ան կը վայելէր նաեւ Արեւմուտք գտնուող իրանցի ընդդիմադիրներու աջակցութիւնն ու նեցուկը:



Նշենք նաեւ որ 2017ի տնտեսական բողոքներու ցոյցերը՝ կայծակնային արագութեամբ երեւան եկան, սննդամթերքի սակագիններու անակնկալ բարձրացումով: Յոյսերը քաղաքէ քաղաք տարածուելով ստացան հակաիշխանական երեւոյթ, մինչեւ իսկ սկսան ասպարէզ կարգալ իրանի նախագահ Հասան Ռուհանիին եւ զերագոյն առաջնորդ Այաթոլլահ Ալի խամենէին դէմ: Այդ բոլորը կը կատարուէին հեռուստաերկրի միջոցով: Telegram-ը փակուեցաւ իրանեան կառավարութեան բողոքներուն վրայ, քանի որ տեղեկութիւն սփռուած էր իբրեւ թէ առցանց կազմին ռումբի պատրաստութիւնը կը բացատրուի: Ջամ ուրացած է թէլէկրամի միջոցով խոսովութիւն չառաջացնելը:

Մահապաշտի գործադրութիւնը արժանացաւ միջազգային դատաւարտումի: Այս առթիւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնն ըսաւ. «Ասիկա բարբարոսական անընդունելի արարք մըն է եւ իրանի մամուլը ազատութեան ոտնահարումը»:

Միջազգային ներում կազմակերպութեան անունով Տիանա էյթիստիւն եւս անդրադառնալով Ջամի դէմ մահապաշտի գործադրութեան, զայն նկատեց անասական դատողութիւն իրանական իշխանութիւններու կողմէ, ահ ու սարսափ տարածելու համար երկրէն ներս:

Իրանեան պետական հեռուստակայանը Ջահը որակեց որպէս ահաբեկիչներու ղեկավար: Յունիս ամսուան ընթացքին մահապաշտ արձակուած էր որպէս «երկիրն ապականող»: Նման անուանարկում կը կատարուի լրտեսութեամբ եւ իրանի մէջ պետական հարուած յառաջացնելու հետ առնչութիւն ունեցողներու նկատմամբ:

Արդարեւ, Ջամի առցանց "Amad News" կայքէջն ու կայան APP Telegram-ի միջոցով 2017ին բողոքի շարժում չառաջացուց եւ իշխանութիւններն անհանգստացուց մարտահրաւէր կարգալով շիթ կրօնքի աստուածաբանութեան:

Ֆրանսայի Նախագահը Է. Մագրոն Դարձեալ Լիբանան Կու գայ

Յառաջիկայ Երեքշաբթի, Դեկտեմբերի 22ին, Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ՝ Էմմանուէլ Մագրոն իր երկօրեայ այցելութեան ընթացքին պիտի ունենայ բազմաթիւ հանդիպումներ եւ պաշտօնական խօսակցութիւններ: Անոնց առանցքը պիտի կազմեն կառավարութեան կազմութիւնը տնտեսական վերականգնումը: Մասնաւորաբար Պէյրութի նաւահանգիստի եւ շրջակայքի վերաշինութիւնը եւ այլ հրատապ հարցեր:

Ջամ իրանէն փախուստ տուած է 2009ի «Կանանչներ Շարժում»-ի բողոքներէն ետք: Նախ ապաստանած է Մալիզիա եւ ապա Ֆրանսա: Իրանի իշխանութիւնները բնաւ չի նկարագրեցին թէ ինչպէս իրանի Յեղափոխական Պահակները ձերբակալած էին զինք: Սակայն Ընդհանուր Ներում (Amnesty) կազմակերպութիւնը ըսաւ թէ ինք ձերբակալուած է դէպի Իրաք կատարած ուղեւորութեան ընթացքին:

Լրագրողներու Առանց սահմանի միութիւնը որ կ'աշխատի տեղեկատուական եւ մամուլի ազատութիւններու համար, նշեց որ Ջամի կախաղան հանուելը նոր ոճի մըն է իրանի արդարադատութեան համար»:



Արդարեւ, այս այցելութեան կապակցութեամբ կան վերապահ լաւատեսութիւններ: Միւս կողմէ կ'իմանանք թէ Լիբանանի նշանակեալ վարչապետ Սաատ Հարիրի, նոր դժուարութիւններու առջեւ կը գտնուի հա-

մախոհական դահլիճ մը կազմելու ճիգին մէջ: Կան արտաքին եւ ներքին ճնշումներ եւ նախասիրութիւններ, որոնք կը խորը ընդոտեն ամիսներ տեւող դահլիճի կազմութեան գործընթացը:

Ինչո՞ւ եւ Արդեօ՞ք

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՍ

Արցախեան այս վերջին պատերազմը բոլորիս մտքերուն մէջ ծնունդ տուաւ շատ մը ինչո՞ւներու, որոնց հաւանական (արդեօ՞ք) պատասխաններուն մէկ մասը ունինք իսկ մնացեալներն ալ կրնան բացայայտուիլ մօտիկ թէ հեռաւոր պատգային: Մինչ այդ, մեր ընթերցողներուն կը ներակայացնենք մեր մտքով անցած ինչո՞ւները եւ անոնց հաւանական պատասխան արդեօ՞քները:

Սկսինք «վերէն»՝ մեր կաթողիկոսներէն:

Ինչո՞ւ Գարեգին Բ. եւ Արամ Ա. փոխանակ իրենց յայտարարութիւնները սահմանափակելու ժողովուրդին ուղղուած սթափութեան եւ համերաշխութեան հրահրող հայրական յորդորներով, եկեղեցին մտցուցին քաղաքական դաշտ՝ վարչապետի հրաժարականի պահանջով եւ իրենց յայտարարութիւնները «համընկնեցնելով» հրապարակի 16-17 կուսակցութիւններու տուած վերջնագրի թուականին: Արդեօ՞ք անոր համար, որ առաջինը պարտաւորուեցաւ նախկինները ներկայացնող այդ 16-17-ին տուրք մատուցելու, իսկ երկրորդն ալ՝ Հ. Յ. Դաշնակցութեան:

Ինչո՞ւ գոյգ կաթողիկոսները ամբողջ 20 տարի լուր մնացին Հայաստանի մէջ տիրող մենատիրութեան արհաւիրքներուն, քաղաքական սպանութեանց, ընտրական կեղծիքներուն, օրէնքի անհատկապէս խախտումներուն, երկրի հարստութեան գաւթումին, եւ այլն: Արդեօ՞ք անոր համար, որ իրենց ալ շահաբաժին կը հասնէր այդ կողոպուտէն:

Ինչո՞ւ համար պաղ պատերազմի քաղաքական նպատակներով երկփեղկուած մեր եկեղեցին չմիաւորուեցաւ անոր չքացումով: Արդեօ՞ք դարձեալ նիւթական շահի նպատակներով: Ի դէպ, եթէ իսկապէս ազգային շահ կը դաւանինք, Հայաստանի անկախացումը ինչ լաւ առիթ էր օտարի ձեռքով բաժնուածը մեր ձեռքով միաւորելու: Այսպիսով վերացուցած կ'ըլլայինք Կիլիկիայէն շատ հեռու կարգ մը երկիրներու եւ քաղաքներու մէջ զոյգ առաջնորդարաններու խայտառակութիւնը եւ յաւելորդ եկեղեցիներու վաճառքի եկամուտով նպաստած կ'ըլլայինք Սփիւռքի եւ Հայաստանի հզօրացման:

Ինչո՞ւ «վար»՝ պարզ մահահանացուներու մակարդակին:

Ինչո՞ւ համար 16-17-ն չեն ուզէր սահմանադրական միջոցներով հասնիլ իշխանափոխութեան, այլ՝ վերջնագրերով եւ լեղաշրջումով: Արդեօ՞ք անոր համար, որ ժողովրդավարական սկզբունքներու կիրառումը իրենց հաշուին չգար:

Ինչո՞ւ համար 20 տարի հայրենիքը աւազակապետութեան վերածողները, որոշեցին ստեղծել «Հայրենիքի ֆրոնտիստական ճարժում»: Արդեօ՞ք փրկելու համար իրենց եկամուտի աղբիւրները:

Ինչո՞ւ համար 16-17-ին առաջադրած թեկնածուն՝ Վազգէն Մանուկեանը բազում հարցականներու առիթ կու տայ, նախ սպառնալով, որ «գազազած ժողովուրդը կը յօշոտէ» Փաշինեանին, ապա յայտարարելով որ «մենք չենք ուզում ցնցումներ»: Կամ՝ յայտարարելով, որ «մենք չենք հաշտուի Եռակողմ

յայտարարութեան հետ», ապա աւելցնելով, «մենք չենք կարող հրաժարուել դրանից»: Արդեօ՞ք յապաղումով կ'անդրադառնայ, որ ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդուող երկրի մը մէջ, նախատինքի համագոր է նոյն ժողովուրդը նմանցնել վայրի կենդանիներու, ու կը փորձէ քողարկել իր մտածելակերպը, մեղքը քաւելու չքմեղանքի փորձներով:

Ինչո՞ւ համար կարելի է հաւատք ընծայել 16-17-ի մաս կազմող ՀԾԴ-ի ԳՄ անդամ իշխան Սաղաթեղեանի համահայկականութեան, համերաշխութեան, արժանապատուութեան, հզօր պետականութեան, հայրենիքի փրկութեան, ազատ արդար ընտրութիւններու կայացման քարոզներուն: Արդեօ՞ք անոր համար, որ ամբողջ 20 տարի իշխանութեան մաս կազմելով, այդ խօսքերուն հակառակ գործունէութիւն ունեցան:

Ինչո՞ւ համար մի քանի վերջնագիրներ տուած եւ արդիւնքի չհասած 16-17-ի մաս կազմող «Հայրենիք» նորաստեղծ կուսակցութեան հիմնադիր՝ Արթուր Վանեցեանի նոր կարգախօսը՝ «Ամանորը առանց Նիկոլի» կը «մտահոգէ» մեզ: Արդեօ՞ք անոր համար, որ գոյգ կաթողիկոսները այդ ալ կրնան ընդգրկել իրենց հայրական աղօթքներուն մէջ:

Ինչո՞ւ համար 16-17-ի հրապարակային հաւաստիացումները, որ Նիկոլը պէտք է հեռանայ, բայց նախկինները (իմա՝ իրենք) չեն վերադառնար, որեւէ արժէք չեն ներկայացնէր: Արդեօ՞ք անոր համար, որ ժողովուրդը կը գիտակցի այդ 16-17-ի եւ անոնց առաջ մղողներու իսկութեան:

Ինչո՞ւ համար 16-17-ի մաս կազմող ԲՀԿ-ի ղեկավար Գագիկ Ծառուկեանի մեծ շունթով ճակատ մեկնելու կազմած խումբը այդպէս ալ ճակատ չհասաւ: Արդեօ՞ք ճամբան կորսնցուցին:

Ինչո՞ւ համար պատերազմի առաջին օրերէն իսկ, ըստ հաւաստի լուրերու, կարգ մը հրամանատարներ դիմեցին դատաւարութեան, մինչ իրենց զինուորները առիաբար կը պայքարէին: Մինչեւ իսկ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան յայտարարեց անվտանգութեան գօրայիններու ճակատ մեկնելու մերժման մասին: Արդեօ՞ք այս արարքներուն դրդապատճառները պիտի բացայայտուին շուտով:

Ինչո՞ւ համար հակառակ տարիներէ ի վեր համաձայնուած ըլլալուն, որ պիտի յանձնենք 7 շրջանները, լրջօրէն չլծուեցանք գէթ Արցախի պաշտպանական գիծերու ամրապնդման: Արդեօ՞քի հարց չկրնար ըլլալ այս պարագային, երբ բացայայտ դաւաճանութիւն է կատարուածը:

Ինչո՞ւ համար անցած ըլլալով հանդերձ 1998-ի եւ անոր հետեւանք Հոկտեմբեր 27-ի ճանապարհէն, դարձեալ կ'ընթանանք նոյն ուղիով: Արդեօ՞ք մեր մէջ այդքան արմատացած է օտարին գործիք դառնալով հատուածական շահ հետապնդելու հոգեբանութիւնը:

ՆԷ, Էդ ո՞նց եղաւ մարդ ջան, որ միտքը ընկաւ տնից դուրս գալ... բա ո՞նց էս թողնելու տեղեկիզորի էկրանը: Հազար եմ ասել՝ շարժուիր, դուրս արի, քայլիր, թէ չէ՝ հա՛րստեղ ա ցաւում, ընտեղս ա ցաւում...

ՆԱ, Հուր ջա՞ն... կ'անեմ, ինչ որ ուզես կ'անեմ: Մերոնք հաղթում են է՛, գնանք մի բացօդեայ ռեստորան ու փառաւորապէս նշենք մերոնց յաղթանակը:

ՆԷ, Հազար եմ ասել, իմ անունը Հուրիկ է, Հուրիկ: Հուրն ի՞նչ է:

ՆԱ, Ախր ո՞նց ասեմ Հուրիկ, «Հուրիկ»ը մի տեսակ փոքրացնում է ենթակայի արժէքը, դու հասակն առած կին, քեզ վայել է ՀՈՒՐ ասելը, որովհետեւ դու հուր ես, կրա՛կ, վառում՝ թողում, վառում՝ թողում...:

ՆԷ, Հա՛, լաւ, հասկացայ, մի շփանայ, «վառում թողում», չէ՛ մի՛...: Հիմա ասա ո՛ւր գնանք... սպասիր, սպասիր, մի բան յիշեցի: Անցեալ շաբաթ սանիկը կնոջ հետ արեւելեան տիպի ռեստորանում են եղել ու շատ գո՛հ են մնացել թէ աղանդերներից եւ թէ սպասարկումից: Հիմա Հրանուշին գանգեմ իմանամ հասցէն:

ՆԱ, (մեկուսի). Օհօ՛, կրակն ընկանք, գնա՛ց մի տաս րոպէ: Հրուշը մինչեւ հոլիվուդեան հայ կեանքի վերջին նորութիւնները չփոխանցի հեռալարի միւս ծայրին գտնուող անձին՝ չի հանգստանայ: Նա մեր շրջանի ռադիոն է:

ՆԷ, Հոգնեցի լսելով Հրանուշին, մեղաւոր ժպիտով ասաց Հուրիկը:

ՆԱ, Գիտեմ, ուզում ես փոխանցել նրա ասածները, բայց դրա ժամանակը չէ, մեքենայում կը պատմես, գայրացած ասաց ամուսինը:

ՆԷ, Լաւ սիրելիս, քնքուշ տոնով պատասխանեց Հուրիկը, զգալով, որ շատախօսութեան չափն անցել է, քչիւր սիրելիս դէպի Բեյլեր-

լի Հիլզ, ինչպէս կ' ուզես գնայ: Ռեստորանի անունը «Վանա ծով» է, մի տեղ կանգնիր եւ բջջայինով ճշդիւր հասցէն:

Որպէս օրինապահ վարորդ, ամուսինը այդպէս էլ վարուեց: Ճշդեց հասցէն, գնալու ուղղութիւնը, սեղմեց կոճակը ու մեքենան մտաւ ընթացքի մէջ: Երկար էր ճանապարհը, պէտք էր գրոյցի բռնուել եւ կամ էլ՝ երկարանուագ սալիկը գործի դնել: Հուրիկը որոշեց երկրորդ միջոցին դիմել: Ամուսնու սիրած ֆրանսիացի երգիչ ժո Դասանի չափազանց յայտնի երգը հազիւ սկսած.

ՆԱ, Այ կնիկ, հիմա ժո Դասան լսելու ժամանակն է՞... հազիւ առիթ է մեր գործերի մասին խօսելու համար, մենք մի կէս ժամ ունենք մինչեւ տեղ հասնելը: Պատմիր, դու եւ Արտաշն էք զբաղւում գրքերն առաքելու գործով, ի՞նչպէս է վիճակը:

ՆԷ, Ասեմ որ այնքան էլ վատ չէ, եթէ հաշուի չ' առնենք քո գրչակից եօթ ընկերներին, որոնք յամառօրէն լուծում են...

ՆԱ, Տարօրինակ է, լրջօրէն խորհելու առիթ է սա, իսկ ես մեծ յոյսեր էի կապել նրանց հետ, չէ՞ որ նուիրատուութիւնը ինձ համար չէ, այլ՝ «Հայաստան Հիմնադրամ»ի, պատերազմում գո՛հ գնացած, բեղն ու մորուքը հազիւ ծլած 1819 ամեայ անփորձ, գէնք չտեսած, պատերազմում գոհուած պատանիների ընտանիքներին օգնելու համար:

ՆԷ, Մոռացիր Յակոբ, գուցէ նրանք այլ ճանապարհներով մեծ չափի նուիրատուներ են... «Ի՞նչ իմանաս», մինչեւ հաստատ չիմանաս», ասում է ժողովուրդը: Պարզապէս փորձիր լաւ ճանաչել մարդկանց: Էս տարիքում էլի նոյն միամիտն ես...: Մի իրողութիւն կայ, որ ուզում էի քեզնից գաղտնի պահել, բայց ինչպէս տեսնում եմ՝ հնարաւոր չէ, մանաւանդ որ ես էլ կամ դրա մէջ, եւ յետոյ, միեւնոյնն է, հետագայում դու այդ մասին կ'իմանալիր:

ՆԱ, Գաղտնիք, ի՞նչ գաղտնիք կարող է լինել այս հայրենանուէր գործում:

ՆԷ, Խնդրում եմ մօտենաս մայր-թին ու մէկերկու վայրկեան հանգստանաս՝ քանի փորձանքի չենք եկել: Հիմա լսիր: Յիշո՞ւմ ես, մէկ շաբաթ առաջ գնացինք քո 30

տարուայ ընկերով՝ ժորեսի շքեղ առանձնատունը՝ երկու գիրք վերցնելով մեզ հետ:

ՆԱ, է՛, տարանք, յետո՞յ ինչ, ի՞նչ է եղել որ, մէկը մնաց իր մօտ, իսկ միւսը չվերցրեց՝ ասելով որ, որեւէ մէկը չունի որպէսզի կարողանայ համոզել: Այդտեղ արդէն ես հասկացայ, որ նրա վրա յոյս դնել չի լինի:

ՆԷ, Մի ընդհատիր, խնդրում եմ: Դու հանգամանօրէն բացատրեցիր այդ շքեղ, միանգամայն հաճելի ընթերցող, Երեւանում հրատարակուած գիրքը տարածելու նպատակի մասին, բայց դիմացինը ամբողջովին անհաղորդ ու անտարբեր, լսում էր քեզ առանց որեւէ հարցուփորձի, առանց հասկանալու, ըմբռնելու երեւոյթի լրջութիւնը: Յստակ էր, որ մարդուն չէր հետաքրքրում այդ ամէնը, ի՞նչ Հայաստան, ի՞նչ Ղարաբաղ: Դու սփրթնել (դէմքի գունաթափութիւն) էիր, գոյն չկար երեսիդ: Քեզ համար մի անբացատրելի երեւոյթ էր յայտնաբերուել երկրամեայ «բարեկամիդ» պահուածքի մէջ, դու հազիւ էիր քեզ զսպում, որ չբարկես: Ես նկատեցի, որ դու ուզում ես սեղանի վրայի միւս գիրքն էլ վերցնել, բայց նկատելով իմ սաստող հայեացքը՝ մտափոխ եղար: Ու մենք անմիջապէս վեր ելանք սեղանից: Եթէ յիշում ես, տանտիկինը մեզ ճանապարհեցիս բարձրաձայնեց, չզիտեմ թէ ինչ եմ անելու այդ գիրքը, ո՞ւմ եմ տալու...: Մեքենայի շարժիչն արդէն աշխատում էր: Քեզ կորցրած, ցանկացար իջնել մեքենայից ու գնալ ետ վերցնել գիրքը: Այս անգամ ցավ պատճառելու չափ սեղմեցի ձեռքը: Հլու, հնազանդ ենթակուցեցիր:

ՆԱ, Հուրիկ ջան, այն ամէնը ինչ որ ասացիր՝ ես այդ պատմութեան գլխաւոր հերոսներից եմ, ես ապրել եմ այդ ամէնը, անցել դրա միջով: Ո՞րն է նորութիւնը, որին ես տեղեակ չեմ: Հակառակ պարագայի պատմածը հեքիաթի կը նմանուի քիչ առաջուայ նկարագրութիւնը: Ուրեմն մի բան կայ, մի գաղտնիք, որին ես տեղեակ չեմ: Հիմա կարո՞ղ ենք շարժուել: Ես գայլի պէս անօթի եմ:

ՆԷ, Ո՛հ, չենք կարող, լսիր այդ պատմութեան շարունակութիւնը: Ես գաղտնիք եմ պահել այս քանի օրերի ընթացքում, որպէսզի այն ասելու դէպքում չխաթարուի մեր երկարամեայ բարեկամութիւնը ընկերովը ընտանիքի հետ: Ախր, ես էլ եմ մինչեւ հոգուս խորքը վիրաւորուած նրանց սմարդի վերաբեր-

մունքի համար: Հիմա լսիր թէ ինչ եղաւ:

ՆԱ, Ի՞նչ պիտի եղած լինի որ Հուր ջան, եղածը՝ եղած է: Սրանց էլ պատ տանք՝ վերջնայ գնայ: Այսքան երկար տարիների ընթացքում որքա՞ն ենք իբր ընկեր գտել, յետոյ՝ կորցրել: Այն մարդիկ, որոնց միտքը, ուղեղը, տրամաբանութիւնը (եթէ կայ իհարկէ), անցնում են ստամոքսի միջով՝ միայն ուտելիամելու ժամանակ ժամանցի ընկեր եղիր նմանների հետ: Հիմա ասա տեսնեմ ինչ է եղել:

ՆԷ, Ուրեմն այսպէս: Ժորեսնեց տուն գնալու յաջորդ օրը, առաւօտ կանուխ, երբ դու գնացել էիր բժշկի, հեռաձայնում է ընկերովը կինը՝ վարդուհին եւ առանց բարեբարի լոյսի, բառացի շարում է հետեւեալ նախադասութիւնը.

Հուրիկ ջան, ճիշդն ասած, չզիտեմ ինչ անեմ էս գիրքը, իմ շրջապատում ոչ ոք գիրք չի կարդում, մենք էլ երբէք չենք կարդում:

Հազիւ եմ կարողանում զսպել գայրոյթս, որպէսզի չվիրաւորեմ ու որոշ ժամանակ լուծւեմ եմ:

Հը՛... ի՞նչ եղաւ Հուրիկ, չես լսո՞ւմ, ի՞նչ անեմ էս գիրքը:

Վերջապէս, մի կերպ ինձ հաւաքելով, հանուն նպատակի կոշտ ու կոպիտ ասացի.

Նուիրատուութիւն արա «Հայաստան» հիմնադրամին, բաց արա գիրքը, առաջին էջից առաջ բացատրութիւն կայ, հայաստանեան ուղղագրութեամբ է ամբողջ գիրքը: Քեզ համար հեշտ կը լինի կարդալը:

Մէկ ա, ես բան չեմ հասկանում, մի քանի դուրս տամ կը լինի՞...

Ո՛հ, չի լինի... մարդուդ հետ հենց հիմա գիրքը ետ ուղարկիր, համարեայ բղաւոցով ասացի ես ու կախեցի ընկալուէք:

ՆԱ, Քսան դուրս հա՛... վա՛յ անամոթ: Աւելին չ'ասեմ, որպէսզի մարդիկ չ'ասեն թէ որքան միամիտ մարդ եմ ես, որ նման գծուծ մարդկանց հետ եմ ընկերութիւն արել: Յետո՞յ, Հուր ջան, ի՞նչ եղաւ, եկա՞ւ ժորեսը, գիրքը բերե՞ց:

ՆԷ, Այո՛, եկաւ եւ դուան պոնկին առանց մէկ բառ իսկ արուսանելու տուեց գիրքը եւ հեռուից աշխատեցնելով Մերսեդեսի շարժիչը՝ արագօրէն հեռացաւ:

ՆԱ, Տխուր է Հուրիկ, շատ տխուր: Բոլորովին տրամադրութիւն չունեմ որեւէ տեղ գնալու, արի ետ դառնանք, թէեւ հենահենա հասել ենք: Խոստանում եմ յաջորդ շաբաթ քեզ տանել այդ նորաբաց «Վանա Մով» ռեստորանը:

#ArtsakhStrong
#GlobalArmeniansUnite
**WE ARE OUR BORDERS.
ALL FOR ARTSAKH.**
Donate Now
**TO DONATE VISIT
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE**

Տոքթոր Վազգէն Ժամկոչեանի Մահուան Քառասունընդ Առիթով Ազգին Ցաւով Ապրող Ու Շնչող Տղան

Մահեր կան, որոնց հետ անկարելի է հաշտուել: Անոնցմէ մէկն է ընկեր Վազգէնին անակնկալ «փախուստը» այս աշխարհէն: Փախուստ անձնական, ազգային, արցախեան, լիբանանեան, միութեանական ու համաշխարհային տագնապներէ, անապահով ներկայիս ու անորոշ ապագայէ: Գործը կիսատ՝ հեռացաւ անժամանակ, բազմաթիւ հարցականներով, ընտանեկան ծրագիրներով (հասցուց փառաւոր երիտասարդ մանչ ու աղջիկ, ճամբայ ելաւ կարգելու, բայց ափսոս, պիտի չվայելէ Յակոբին ու Հուրիին ապագայի նուաճումները): Հապա կարինէ՞ն... Չարենցաւանի «մեր հարսը», եւ նոյնքան ծանր՝ որդեկորոյց իր մօրն ու հօրը կսկիծը...



« « «

Վերադառնամ յուշերուս գիրքը եւ հաւանաբար այս անգամ կարենամ վերապրիլ մեր գործուն տարիները Երեւանի մէջ: Ուսանողներ էինք: ՌԱԿ-ի երդում տուած լիբանանահայ ու սուրիահայ տղաք, որոնք պիտի ապրէին պատմութիւն, իրենց աչքերով պիտի տեսնէին Լեւոնի արձանին վարբերումը այդ օրերու Լեւոնի հրապարակէն: Պիտի ըլլային վկաները 1988-ի երկրաշարժին, Արցախի ու Հայաստանի անկախութեան պատմական օրերուն: Իրենց մասնակցութիւնը պիտի բերէին Լեւոն Տէր Պետրոսեանի ի նպաստ քարոզարշաւին՝ ձայներ ապահովելով յօգուտ Հայաստանի նախագահութեան թեկնածուին: Վերջապէս, ժողովրդավարական, իրա՛ւ տեմոքրատիկական վարչակարգի հաստատման գուզնութեան այդ գաղափարախօսութեան տարածման դրօշակակիր ՀՌԱԿ-ի հիմնադրութեան իրենց լուծման պիտի բերէին որպէս Երեւանի ՌԱԿ Արշակ Չոպանեան ուսանողական ակումբ: Այո, ընկեր Վազգէն, դուն կը հաւատայիր կամաւոր աշխատանքին ու տուիր քու ժամանակդ, կտրեցիր քու ընտանիքդ, քու հարազատներդ: Եւ, յետահայեաց, երբ մեր աչքերը կը յառնէինք անցեալի այդ տարիներուն վրայ, կը ցաւէինք, որ մեր ցանած այդ ծիւղերն ինչ-ինչ պատճառներով չծաղկեցան լիարժէքօրէն: Բան մը, որ երեսուն տարիներ ետք, այսօր, այս տագնապալի օրերուն որքան անհրաժեշտ է մեր հայրենիքին. Այդ կը կոչուի ոսկի միջին. իրա՛ւ ժողովրդավարութիւն, օրէնքի՛ իշխանութիւն:

Սիրելի՛ ընկեր, դուն չկասարդէն ամիս մը, աւելի, սակայն քու յիշատակդ թարմ ու առողջ պիտի շարունակէ թեւածել քու ամենամօտիկներուդ սիրտերուն ու հոգիներուն մէջ. անոնք ըլլան ծնողք, կողակից, գաւակներ, քոյր թէ եղբայր, հարազատ մարդիկ:

Սիրելի՛ Կարինէ, Յակոբ եւ Հուրի, Մարիա, Մարտիկ եւ ծնողներ,

Թոյլ տուէք ընկեր Վազգէնին բոլոր ընկերներուն կողմէ փոխանցել ցաւակցական մեր զգացումները, կիսել ձեր վիշտը, մեծ ցաւն ու կորուստը: Թող անոր վա՛ռ հայրենասիրութիւնը օրինակ ծառայէ գալիք նոր սերունդներուն համար: Մա՛րդ, որուն համար Հայն ու Հայաստանը մնացին գերիվեր բոլոր մանրութիւններէ:

ՀՐԱՉ ՍԵՓԵԹ ՃԵԱՆ

«Հայաստան» Հիմնադրամի Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն

կալութիւն կը յայտնենք սփիւռքի այն բոլոր կազմակերպութիւններուն, նախաձեռնութիւններուն եւ անհատներուն, որոնք համազգային դրամահաւաքին միացան այլընտրանքային արշաւներով, որոնց ընթացքին հաւաքագրուած գումարները փոխանցուեցան հիմնադրամի ցանցին:

Այդպիսի նախաձեռնութիւններուն կարգին էին նաեւ ՀԲԸՄ-ի, OneArmenia-ի, Armenia Aid-ի եւ այլոց կազմակերպած դրամահաւաքները, որոնց տեխնիկական ու բովանդակային կազմակերպման «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը ոչ մէկ ներգրաւուածութիւն չէ ունեցած: Օրինակ, Հոկտեմբեր 10-ին, Armenia Aid անունը կրող դրամահաւաքի կազմակերպիչները կապի մէջ եղած են միմիայն Լոս Անճըլըս տեղակայուած Armenia Fund Inc.-ի հետ, որ ԱՄՆ-ի մէջ գրանցուած շահույթ չհետապնդող հիմնադրամի ցանցին ներս ներգրաւուած համագործակից կազմակերպութիւն է Արեւմտեան ափին մէջ:

Այդ դրամահաւաքի ընթացքին հաւաքագրուած գումարները Armenia Fund Inc.-ի կողմէն մասմաս, ըստ փաստացի մուտքերու, հաղորդուած են «Հայաստան» համահայկական հիմնադրամին եւ աստիճանաբար աւելցուած դրամահաւաքի ընդհանուր թիւին: Ինչ կը վերաբերի Armenia Fund Inc.-ի կողմէ մուտքագրուած անկանխիկ եւ կանխիկ մուտքերուն, ապա Armenia Fund Inc.-ն իր կայքով հրապարակուած «Յաճախ տրուող

հարցեր»-ու պատասխաններով մանրամասնած է նուիրատուութիւններու մուտքագրման գործընթացը եւ հաւաստիացուցած, որ բոլոր նուիրատուութիւնները պաշտօնապէս ճանաչուած են, իսկ նուիրատուները ստացած են հաւաստիացման ու շնորհակալական նամակներ:

Այս եւ Նոյեմբեր 26-ին տեղի ունեցած հեռատեսիլային մարաթոնի վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները կարող էք տեսնել հետեւեալ յղումով՝ <https://www.armenianfund.org/newsroom/frequently-asked-questions/>:

Վերստին անդրադառնալով պատերազմի թէժ օրերուն «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմէ Հայաստանի Հանրապետութեան տրամադրուած գումարներուն, կը վերահաստատենք, որ այդ գումարներու վերաբերեալ հիմնադրամի Հոգաբարձուներու խորհուրդն առցանց քուէարկութեամբ կայացուցած է համապատասխան որոշումներ, որոնք հրապարակուած են հիմնադրամի կայքը հետեւեալ յղումով՝ <https://www.himnadram.org/hy/1606218447>:

Ինչ կը վերաբերի այդ գումարներուն՝ Հայաստանի Հանրապետութեան նուիրաբերելու հիմքերուն, անոնք յստակօրէն ձեւակերպուած են Հիմնադրամի վերջին մէկ ամսուայ ընթացքին տրուած բազմաթիւ պարզաբանումներով <https://www.himnadram.org/hy/1606218447> ինչպէս նաեւ ՀՀ Ֆինանսներու նախարարութեան կողմէ 24.11.2020 թուականին կատարուած յայտարարութեամբ <https://bit.ly/3nkE0j2>:

Ռուսաստանը Չի Գանաչում

Շարունակուած էջ 2-էն

յանձնակատարի, Համաշխարհային պարենային ծրագրի, Հումանիտար հարցերի համակարգման գրասենեակի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ կազմակերպութիւնների հետ, որպէսզի ակտիւօրէն օգնի պատերազմից փախած հայերին եւ ատրպէյճանցիներին՝ վերադառնալու տուն եւ խուսափելու Լեւոնային Ղարաբաղից փախստականների նոր ալիքից:

Անդրկովկասում Ռուսաստանն ու Թուրքիան, որը եւս մէկ աշխարհառաջավարական դերակատար է, պայքարում են միմիանց դէմ կամ փոխգիշտումներ կատարում միմեանց: Մի կողմից՝ Ռուսաստանը կտրականապէս մերժում է Թուրքիայի մասնակցութիւնը Լեւոնային Ղարաբաղում «խաղաղապահ գործողութիւններին» եւ պնդում է, որ տարածաշրջանում տեղակայուած միայն ռուս խաղաղապահներ, միւս կողմից՝ տարածաշրջանային կայունութիւնն ապահովելու համար համաձայնուած է Թուրքիայի հետ համատեղ մոնիտորինգի կեդրոն ստեղծել եւ այն հնարաւորինս շուտ գործարկել: Վերջին երկու ամսուայ ընթացքում Ռուսաստանը միայն ԱՄՆ-ին եւ Ֆրանսային է տեղեկացրել խաղաղապահների մասին, իսկ վերջիններս դարաբարեան ճգնաժամի կարգավորման գործընթացում տեղափոխուել են երկրորդ պլան:

Վերլուծաբանները նշում են,

որ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմից ձեռք բերուած հրադադարի եռակողմ համաձայնագիրը դադարեցնում է դարաբարեան արիւնալի հակամարտութիւնը, նախատեսում է հայկական զօրքերի դուրսբերում տարածաշրջանից եւ փախստականների վերադարձ, բայց չի յստակեցում վիճելի տարածքների վերջնական կարգավիճակը:

Անդրկովկասեան «վառդի տակառի» պայթուցիչը դեռ ոչնչացուած չէ: Նախ՝ Ռուսաստանը չի ճանաչում Ատրպէյճանի լիարժէք ռազմական յաղթանակը, եւ Ատրպէյճանը փաստացի վերահսկողութիւն չի ստացել Լեւոնային Ղարաբաղի նկատմամբ: Նաեւ կասկածներ կան, թէ որքան կը տեւի Ռուսաստանի եւ Ատրպէյճանի փոխադարձ վստահութիւնը: Երկրորդ՝ Հայաստանում քաղաքական իրավիճակն անկայուն է, եւ յայտնի չէ, թէ որքանով են իրականացնելու զօրքերի դուրսբերումը եւ տարածքների փոխանցումը: Երրորդ՝ Թուրքիայի տարածաշրջանային ազդեցութիւնն աճում է, իսկ նրա ներթափանցումը դէպի նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններ՝ արագանում: Դեռ յայտնի չէ՝ արդեօք այն հաւատարիմ կը մնա՞ց հրադադարի համաձայնագրի կարգաւորման եւ վերահսկման գործող մեխանիզմին, եւ ինչպէ՞ս դա կ'ազդի Ռուսաստանի խաղաղապահ օպերացիայի վրայ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Ախ, Տունս, Տունս

«Առաջին անգամ աշխարհում տեսայ իմ առաւօտն է այնտեղ մնացել, երկինք ու բարդի, ճառագայթ ու լոյս, իմ հողի հոտն է այնտեղ մնացել»:

Վահագն Դաւիթեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Համակարգիչիս դէմքն էի բացել, նրա էջի յատակին, «Ախ, Տունս, Տունս» եւ «Երգչուհիի Գոհար Հովհաննիսեան» գրուած էր: Երգում էր Գոհարը, «Երգ» էր դարձել Գոհարը: Ողբ էր նրա երգը, կարօտի ցաւ էր նրա երգը: Ակները փակ, համակ ոգի դարձած աղջիկ, երեւի տեսնում էր պապի նկարագրած տունը, իրենց գերդաստանի փլած տունը: Երգում էր գոհարը, աշնան հովիկներից դողացող վայրի նարկիզների օրօրի նման՝ դողում իրանը, լացող ուռենիների վարսերի շշուշի նման հեռում էր լանջը, նրա ներսում սիրտն էր հօր գարկում, հայոց փլած տների կարօտի կանչ: Միայն Հայ-ը անգուսպ կարօտի ցաւ ունի իր երկրին, փլած տներին, ուր գնաց « Ախ, տունս տունս» կանչեց: Գոհար աղջիկ, քու երգը երկրից հայրենագուրկ եղած մարդկանց փլած տներն են, հայրենիքից հեռացածների կողպած տները, նրանց նման դու էլ կանչում ես՝ «Ախ, Տունս, Տունս»: Օտար երկրում ծնուած աղջիկ, քու գէներոմ գերդաստանիդ տան կարօտի ցաւն է, քու երգը մրմունջի ցաւ է, քու երգը զանգեզուրի անտառների բացատների մանուշակների դէմքերից կաթած առաւօտեան ցողի լացի արցունքն է, նման է երկրիդ ծովերի ալիքների մոնչիւնին, քու երկրի բերթողների ողբաձայն կանչին:

Հայոց երգի արքայ՝ Կոմիտաս Վարդապետ, Քուլթանայի լաճ, կաթողիկոսի առաջ կանգնած երգել «Լոյս Զուարթ» շարականը, փոքրիկ Կոմիտասի երգի հնչիւնների դիւթանքի ու նրա յուզաթաթախ կատարման ազդեցութիւնից լացել էր կաթողիկոսը: Շուտ ենք լացում, նոյնիսկ գեղեցիկին ու ճշմարտութեան լոյսին, աշխարհի մեծեր լալկան ցեղին չեն սիրում: Մեր նախնիներ ոչ լալկան եւ ոչ էլ վախկոտ եղել, վկայ մեր պատմիչների պատմաները...: Լսել էք, վարդապետի երգերի ձայնագրութիւնները: Նրա երգը հայրենի երկրի խորունկ վիհերի արձագան է, հողի մշակների հորովելները, հայոց սարերի ձիւնի փլիտը, հարսանեաց հանդէսների, հայոց նախնիների մեհանների տաղերը, բնութեան գողտրիկ երգերը, իր անշէջ անուան հետ Հայու սրտերի սրտիկներ, դարերին գնացող երգեր են: Վարդապետը գնաց իր երկրի շէնքեր, ժողովեց երեք հազար երգեր, մաքրեց նրանց հնչիւնները, յանձնեց ցեղի պահպանումը: Յաւ ունէր, աշխարհին ասելու, որ հայոց շէնքերից հաւաքած երգերը հազար-հազար տարիներ առաջ ցեղի ձայնն էր, լեռնական վայրենի մարդկանց երգի հետ առնչութիւններ չունէր: Ֆրանսա, թատերասրահ, բեմադրակ բարձրանում սքեմաւոր մի վարդապետ, չունէր ձեռքին պահած նուագելու գործիք: Վարդապետը աթոռին նստել, ծոցագրպանից հանել եղեգնեայ մի սրինգ, փչել սրինգը, թռչունի դայլալի, ծառերի սօսափիւնի, ծովի ալիքների մեղմիկ սահանքի, խմբերգերի, երգերի, պարերի, թմբուկի զարկերի, ցորեանի ծովակների երեսն համբուրող հովիկների շշիւնը ծորել սրինգի փողից... ոտքի էր դահլիճը,

ծափահարում: Ֆրանսացի երգարուեստի գիտակ բեմ բարձրացել, գրկել նրան, յայտարարել որ վարդապետը հայոց շինականների երգն էր հնչեցրել: Վարդապետը բարձրացել Եւրոպայի ուրիշ երկրների բեմեր, իր ուսուցանած երգչախումբը երգել վարդապետի ձայնագրած հայ ու քուրդ շէնքերի մարդկանց երգած երգեր, չէասել էին, նրանց հնչիւնները նմանութիւն չունեն, Հայոց շէնքերի ունչպարների երգերին:

Սակայն, վարդապետը փլած սիրտ ունէր, անցել հայոց շէնքերի աւերուած տները կողքով, նայել, հոգին էր ալեկոծուել ձմռան բուքի անհազանցած շաշիւնի նման, մոլորած սրտով երգերի խոսքեր գրել, հնչիւններ կապել նրանց վրայ, փլած տներում վայրի հաւքերի սէրը երգել՝

Սիրտս նման է եմ փլած տներ,
Կոտրել է սիւներ, խախտել գերաններ,
Բուն պիտի դնեմ մէջ վայրի հաւքեր:

Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր,

Տօ լաճ տնաւեր:

Համակարգիչ, Արմենակ Շահմուրատեանը երգում էր Վարդապետի յօրինած ամենանշանաւոր գլուխ գործոց երգը, «Անտունի»-ին, երգահաններ, երաժիշտներ աւանդել էին, որ եթէ վարդապետը միայն «Անտունի» յօրինած լինէր, նոյնքան համբաւաւոր կը լինէր: Հայրենի երկրի ճամբաներում, մերձաւոր արեւելքի երկրների ճամբաներում պղտոր սրտերում անտուն թափառող մանչերի ճիւղ երգեց՝ «Տօ լաճ տնաւէր»:

Վերանկախացաւ հայոց երկրի մի փոքրիկ կտորը, կոխ եղաւ դուշմանի հետ, տուն վերադարձաւ «մեծ»-ի կամքով օտարուած Արցախը, բացուեցին իրենց կառավարական տան դռները, կառավարութիւն, նախարարներ, նախագահ եղաւ: Անողորմ Հայ մարդիկ կողպտեցին եօթանասուն տարիների երկրի մարդկանց արարումը: Առանց աշխատանքի բազում հայրեր, վաճառեցին իրենց տները, կողպեցին տների դռները, մանչերին տարան ուրիշ երկրներ, «Անտուն» դարձան, փոքրերը մեր «մեր տունը, մեր տունը» կանչեցին: Ուրիշ երկրներին հողին տուն պատեցին, անցիւր նրանց կողքով, ծիրանի ծառն է նրանց պատշգամբերին ծիրանի լոյս վառում, տան բակերում խաղողն է կարմիր ծիծաղում: «Հայ» ծաղիկը ուրիշ հողում չի բուսնի, պատանիներ, մեծեր «Ախ, մեր տունը, տունը» սկսեցին կանչել: Փոքրերին տարան երկիր, մկրտեցին Հայու լոյսով լեցուն, իրենց բոլոր կաթողիկոսների միւսուներ խառնուրդով, իրենց հանդերի ծաղիկների բոյրով օժել մանկանց հոգիները, որ «Հայ»-ը այնտեղ խօսի, «Միրանի ծառ», «Կաքաւիկ», «Լորիկ», «Հորովելներ», «Պարեր» իրենց վարդապետի «Անտունի» երգեր, իրենց երգահանների երկրին նուիրուած երգեր հնչէին:

Նոր հողմեր էին փչում չարի կայսրութիւնում, արտօնել փոքր տնտեսութիւններ վարել, արտադրածը վաճառել նաեւ պետական ձեռնարկութիւններում: Մի ան-

հատ արտադրող յաճախ էր իր դրած գործի արտադրանքը հանձնում մեր ձեռնարկութիւնում վաճառելու, ձեռնարկութեան անունը՝ «Էրգրում»: Խնդրել էի ինչու էր իր գործի անունը «Էրգրում» անուանել: «Պղտորել» էր դէմքը, պատմել, որ էրգրումը պապի ծննդավայրը եղել: Փոքր տղեկ եղած ատեն պապը պատմել նրան իր ծննդավայր քաղաքի ու ընդհանրապէս իրենց վաղ կեանքի ու արհաւիրքի տարիների մասին: Յորդորել յարմար առիթի այցելել իրենց տունը, յաճախ հառաչել՝ «Ախ, տունս, տունս»:

Երկու տղամարդիկ պտոյտ գալիս էրգրում-Կարին քաղաքի փողոցներով, նրանցից աւելի երիտասարդը փողոցների տների ճակատներին էր նայում: Երկարկանի մի տան առաջին յարկի խանութի ճակատին Հայերէն գրութիւն էր, պապի անուն ազգանուն, պապի նկարագրած տունն էր: Իր հետ Կարին եկած թուրքերէն իմացող ընկերոջ հետ մտել խանութ, մի փոքր գրոցից յետոյ հարցրել՝ «այս տունը ում տունն է», թուրք խանութպանը պատասխանել, որ իրնց տունն է: Խնդրել էին դուրս գալ, ցոյց էի տուել Մեսրոպի տառերով գրութիւնը, ասել էր, որ այն իր պապի անունով տունն է: Թուրքը մի պահ շուարել էր, աւելացրել, որ այն գնել էր մի Քուրտից, հրաւիրել տուն բարձրանալ: Լեռնային քուրտեր, անողորմ մարդիկ, թուրք աւագակների ու բնակիչների հետ սպաննել էին հայերին, հիմա քուրտեր զղջում են, նոյնիսկ ներողութիւն խնդրել կատարուածի համար, իսկ թուրքեր երբեք: Քարէ սանդուխներով բարձրացել պապի տուն... պապի ստուերն էր դռանը դիմաւորել իրեն, ներս մտել՝ իր գերդաստանի բառասուն մեծ ու փոքրերի ստուերներ սեղանն էին բոլորել, թեւերը տարածել գրկելու նրանց, չէ ստուերներ էին, մոլորած մարդ, փլած հոգով մարդ, աշխարհից խռոված մարդ, շտապ իջել ցած, «Ախ, պապիս տունը, պապիս տունը» մրմնջալով, փախել թուրքից: Շատեր փախել թուրքից, փախել նրանց ստուերներից, Արմենակ հայրս էլ մանչերի հետ փախել թուրքից...:

Հայկական կամաւորական գունդի լեգէոնական կապորալ Արմենակ Լազիսեան, Մուսա Լեւան հերոսամարտին, Կիլիկիայի ազատութեան մարտերին եւ Արարաչի ճակատամարտին մասնակցած Մուսա Լեռնու սրտին Հայկ Նահապետի ծինների արիւնն էր հոսում: Հայաստանը Հայերին կանչում էր երկիր վերադառնալ: Արմենակ, կնոջ ու քրոջ եւ չորս զաւակների հետ

Հայաստան ներգաղթել, բնակեցրել էին Ջանգեզուրի Շուռնուխի գիւղի Փայտամշկման գործարանի բանուորական աւանում: 1949 թուականի Յունիս ամիս 30, ուշ գիշեր, բանաւանի բնակիչ Պապայան ընտանիքին էին աքսոր տարել: Նոյն օրը ինձ գործուղած էին եղել՝ «Կապան-Ղափան», Փայտամշակման Գործարանի դրամատան հաշուի գործառնութիւնները կատարելու ու գործարանի աշխատողների աշխատավարձը վճարելու համար կանխիկ գումար ստանալու: Նոյն օրը, գործարանի արտադրանքը կապան ուղարկելու բեռնատար մեքենայ նստած ուղեւորում էի Կապան: Ինքնաշարժի խճուղի, հանդիպել էինք աքսոր գնացող շարանաշարան բեռնատար ինքնաշարժերի, տղամարդիկ լուռ նստել էին, երկար վարսերը երեսներին իջած կանայք ողբաձայն լացում, փոքր տղաներ ու աղջիկներ «ՏՈՒՆ» եմ ուղում կանչում էին, մայրերի ծուկերին ընկած հառաջով լացում, վայ նրանց հայրերին, որոնք դեռ մի քանի տարի առաջ վերադարձել նրանց երկրի համար մղուած մարտերից, որի կուռում շատեր զոհուել... այդ հասարակարգը չունէր բարոյական կերպար:

Ընտանիքներով աքսորում էին Ջանգեզուրցիներին, որոնք 1915-20 թուականներին, քաջերին վայել կուռով պարտութեան մատնել տասնըմեկերորդ կարմիր բանակին, իրենց լեռներից վռնտել ուսին, թուրքին, Ջանգեզուրում ստեղծել՝ «Ջանգեզուրի Լեռնահայաստան Պետութիւն»:

Աքսոր ինքնաշարժով, հապա հայերի դաժան աքսոր, կարաւաններ կազմած, քայլել երկրի ու մերձաւոր արեւելքի ճամբաներով, աշխարհում առաջին ցեղասպանութիւն, հայրենի երկրի ճամբաներով անթաղ մնացած մահացածներ, նրա ճամբաներով թափառով տղաներ ու հրեշտակային աղջնակներ, թուրքերը նրանց տուն տանում՝ կին, հովիւ ու աղախին լինում...: Դրամատան գործարքներս աւարտելու յետոյ գնացել կառախումքի կայարան, բարձրաձայն լաց ու կոծ, պաղատանքի կոչեր, բեռնակարքերի բաց դռներին ողբացող կանայք ու տղամարդիկ, այդ հողի մշակները դեռ նոր իրենց արտերից քաղած ցորեանի նոր բերքը տարել մթերակայաններ որ հաց ուտաէին այդ անորք մարդիկ: Լացելով ու յառաչելով հեռացել, մինչեւ հիմա այդ մանկանց ողբը, կանանց ու տղամարդկանց ցաւը իմ մտքի զանձարանում է մնացել: Այս էլ նման 1915 թուականի ողբերգութիւնն էր: Յունիս 14, յիշատակութեան օր սահ-

Շար.ը էջ 15

Նոր Գիրքեր - Հայկական Մարզարան

Յեղիմակ՝ Աւետիս Բայրամեան
 Յեղիմակի սոյն աշխատասիրութիւնը 860 էջերէ բաղկացած երկրորդ տպագրութիւնն է: Գիրքին մէջ ընդգրկուած է աւելի քան 6000 անուց, 2300 նկար եւ շուրջ 270 հայ մարզիկներու նուիրուած նամակագրիչ եւ մետաղադրամ:

2020ին Լոս Անճելոսի մէջ լոյս տեսած սոյն հատորը նուիրուած է Հայաստանի 30-ամեակին եւ իր զաւակներու ընտանիքներուն:



Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը Կը Պատրաստէ Նուէրներով Լի 12,000 Պայուսակներ Հայաստանի եւ Արցախի Երեխաներուն



Սուրբ Ծննդեան Նուէրներով լի 12,000 պայուսակներ պիտի բաշխուին այս Նոր Տարուան եղանակին Հայաստանի եւ Արցախի մեր երեխաներուն: Այս ծրագրի իրագործման համար Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) հովանավորութեամբ եւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժնի աշխատակիցներուն հետ Աւետիսեան կրթահամալիրի աշխատակազմը իր 10-րդ եւ 11-րդ դասարաններու աշակերտներուն հետ համատեղ անդուլ աշխատած են չորս

Սուրբ Ծննդը տարուայ ուրախ եւ օրհնուած ժամանակն է այս երեխաներուն համար: Դուք կրնաք միանալ մեզ եւ մաս կազմել այս ծրագրին Աստուծոյ սէրը տարածելու եւ Սուրբ Ծննդեան ուրախութիւնը պարզեցնելու Հայրենիքի եւ Արցախի մեր թանկագին երեխաներուն: Ոմանց համար այս պայուսակները կրնան միակ Սուրբ Ծննդեան նուէրները ըլլալ, քանի անոնց ընտանիքներու կարողութիւնը թոյլ չի տար ծախսելու իրենց համեստ եկամուտէն նման նուէրներու վրայ: Նուագագոյն 15 տոլարի նուրս



օր անընդմէջ: Այդ ընթացքին անոնք բաժնած, կարգաւորած եւ դասաւորած են նուէրներով լի պայուսակները՝ պատերազմական գործողութիւններու հետեւանքով մանկական անհոգ առօրեայէն զրկուած եւ ընկերային անապահով պայմաններու մէջ յայտնուած Հայաստանի եւ Արցախի մեր երեխաներուն համար:

1990-ական թուականներու սկիզբէն ի վեր, ամէն Ծննդեան եղանակին, ԱՀԱԸ-ի Սուրբ Ծննդեան ծրագիրը բազմաթիւ ժպիտներ եւ գուարճալի սօնակատարութիւններ կը պարզեւէ հազարաւոր երեխաներու ու անոնց ընտանիքներուն Հայաստանի եւ Արցախի ամբողջ տարածքին, որոնք այս տարի աւելի շատ ունին անոնց կարիքը:

Երաժշտութենէ եւ պարէ մինչեւ Սուրբ Ծննդեան ներկայացումներ եւ Կաղանդ պապայի այցեր,

րատուութիւն մը կրնայ ուրախութիւն բերել մէկ երեխայի: Կը խնդրենք միանալ ԱՀԱԸ-ին շարունակելու Սուրբ Ծննդեան ոգին եւ ուրախութիւնը պարզեցնելու մեր երեխաներուն: Ձեր նուիրատուութիւնները կրնաք կատարել այցեւելով ԱՀԱԸ-ը կաքէջը www.amaa.org.

Հիմնադրուած է 1918-ին որպէս Քրիստոնէական կազմակերպութիւն, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը իր ծառայութիւնը կը մատուցանէ բոլոր անոնց՝ որոնք օգնութեան կարիք ունին՝ առանց խտրութեան: Աւետարանչականը իր այս համաշխարհային առաքելութիւնը կ'իրականացնէ պահպանելով շարք մը կրթական, աւետարանչական եւ ընկերային ծառայութիւններ աշխարհացրիւ 24 երկիրներու մէջ՝ ներառեալ Հայաստան եւ Արցախ:

Առցանց Ցուցահանդես. «Նոր Ազատամարտիկներ. Կանայք եւ Ոչ-բռնի Դիմադրութիւնը» «Սահմանամերձ Շրջանները Կրակի Տակ»



Միշիկընի Համալսարանի Տիրպոն քաղաքի մասնաճիւղի Սթամելոս ցուցասրահը 14 Դեկտեմբեր 2020ին սկսեալ առցանց եւ անժամկէտ պիտի տեղադրէ ամերիկահայ լուսանկարչուհի Քրիսթին Անահիտ Քասի (Շիքակօ) երկու ցուցահանդէսները Լեռնային Ղարաբաղին ու Տաւուշի մարզին առնչուող թեմաներով:

Սթամելոս ցուցասրահը համալսարանի կառուցչէն ներս անկախ միակոր է եւ այս ցուցահանդէսները պատրաստած է ինքնուրոյն: Նոյն համալսարանին Հայագիտական Հետազոտութիւններու կեդրոնը այս ցուցահանդէսին առնչութեամբ ցուցասրահին կ'օժանդակէ միայն հայկական շրջանակները իրազեկելու գծով:

Քրիսթին Անահիտ Քասը Շիքակօ հաստատուած արուեստագէտ է, որու ստեղծագործական ոլորտները կը կազմեն լուսանկարչութիւնը, տեսանիւթեր, գրականութիւնը, քանդակագործութիւնն ու զանգուածային հաղորդակցութեան այլ միջոցներ: Անոր արուեստը կ'ուսումնասիրէ անձնական այն տարածքները, ուր մեր կեանքերը կը հատին՝ հաշուի առնելով անոնց հիմքը կազմող ընկերային արդարութեան եւ մարդու իրաւունքներու հարցերը: Քասը էթնիկական խառն պատկանելիութիւն ունեցող արուեստագէտ է եւ ցեղասպանութիւն վերապրողներու ժառանգորդ: Հետեւաբար, իր աշխատանքը կ'արտացոլացնէ փոփոխութիւններ ներշնչող գրոյցներու մասին պատմող բազմազան ձայները զօրացնելու իր ցանկութիւնը: Իր արուեստագիտական կրթութիւնն ու փաստաբանական ասպարէզը՝ համատեղ, եզակի հայեցակէտ կը ստեղծեն այն անարդարութիւններուն հանդէպ, որոնց շատ մարդիկ եւ համայնքներ կը հանդիպին ամէն օր: Քասը Շիքակօյի Համալսարանի շրջանաւարտ է:

«Նոր ազատամարտիկներ. Կանայք եւ ոչ-բռնի դիմադրութիւնը» ցուցահանդէսը կ'ուսումնասիրէ սակաւ ներկայացուած այն դերը, որ կանայք կը խաղան մշակութիւններու եւ համայնքներու գոյատեւման ու զարգացման մէջ: Այս ցուցահանդէսով ներկայացուած Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետութեան Տաւուշի մարզի կանայք ամէն օր կ'ոյստեւեն ուղղակի սպառնալիքի ներքոյ եւ ոչ-բռնի դիմադրութեան տարբեր եղանակներու կը դիմեն իրենց

իրաւունքները պաշտպանելու եւ իրենց համայնքներէն ներս պատերազմի հետեւանքները մեղմելու համար: Այստեղ հանդիպող կանանց կեանքերը անդառնալիօրէն պատերազմի ազդեցութեան ներքոյ ձեւաւորուած են: Զգալով բռնութեան հետեւանքները իրենց տան, ընտանիքին, մասնագիտական հեռանկարներուն եւ համայնքներուն վրայ եւ ի հեճուկա անոր՝ այս կանայք կը հասկնան ստեղծագործ ոչ-բռնութեան անհրաժեշտութիւնը՝ պատերազմի եւ անհանդուրժողականութեան փակ շրջանակը կոտրելու համար:

«Սահմանամերձ շրջանները կրակի տակ» ցուցադրութիւնը կը բացայայտէ սառեցուած հակամարտութեան աշխարհը եւ կը փաստագրէ պետութեան կողմէ հովանաւորուող բռնութեան հետեւանքները հարակովկասեան փոքրիկ երկրի մը՝ Հայաստանի սահմանային գիւղերուն մէջ (Տաւուշի մարզ) առօրեայ կեանքին վրայ: Ըլլալով Արեւելքի եւ Արեւմուտքի աշխարհաքաղաքական խաչմերուկներուն վրայ՝ հայ գիւղացիները յայտնուած են քաղաքական հակամարտութեան յորձանուտին մէջ եւ կ'օգտագործուին որպէս ճատրակի խաղատախտակին վրայ գիւղերուն ներ՝ անտեսուած ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի նման միջազգային կազմակերպութիւններէ: Սակայն, անոնք տրամադիր չեն հրաժարելու իրենց կամքի ազատութենէն եւ կը շարունակեն աշխատել իրենց համայնքներէն ներս փոփոխութիւններ մտցնելու համար: Նոյնիսկ երբ սահմանամերձ այս գիւղերուն բնակիչները պատերազմի հետեւանքով ամէն օր բռնութեան եւ զրկանքի կ'ենթարկուին, անոնք ամուր կառչած կը մնան իրենց հայրենիքին՝ պահպանելով իրենց լեզուն ու մշակույթը՝ որպէս համաշխարհային ժառանգութեան մաս: Ցուցադրութիւնը կ'ուսումնասիրէ գիւղացիներուն ստեղծագործ ոչ-բռնի դիմադրութեան օգտագործումը՝ իրենց իրաւունքները պաշտպանելու եւ իրենց համայնքները զարգացնելու համար:

Յաւելեալ տեղեկութեան համար կը խնդրենք դիմել արուեստի աւանդապահ եւ ցուցասրահի վարիչ Լորա Քոթթընին (jacotton@umich.edu) կամ դիւանապետ քարտուղար Օթմըն Միւրին (aumuir@umich.edu) եւ այցեւել www.umdearborn.edu/stamelos կայքը:

Ցուցահանդէսների կայքէջը՝ www.umdearborn.edu/stamelos

Ախոյեաններու Լիկա. 1/8 եզրափակիչի Ձոյգերը



Ձուիցերիական Նիոն քաղաքին մէջ Դեկտեմբեր 14-ին տեղի ունեցաւ ֆուտբոլի Ախոյեաններու Լիկայի 1/8 եզրափակիչի վիճակահանութիւնը: Գործող գաւթակիր Միլնիոնս «Պարսլըն» բաժին հասաւ իտալական «Լացիոն», իսկ գաթալոնական «Պարսլընան» պիտի մրցի ֆրանսական ՊՍՅ-ի հետ:

Այս շրջանին իրար չէին կրնար հանդիպել Նոյն խումբէն փլեյ-օֆֆ հասած խումբերն ու Նոյն երկրի ներկայացուցիչները:

Ախոյեաններու Լիկայի 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները տեղի պիտի ունենան ֆետրուարի 16-17 ու 23-24-ին, իսկ պատասխան խաղերը՝ Մարտի 9-10 եւ 16-17-ին:

Ախոյեաններու Լիկա 1/8 եզրափակիչ «Պորուսիա Մոնչընկլադախ» (Գերմանիա) - «Մանչեսթեր Սիթի» (Անգլիա)

«Լացիո» (Իտալիա) - «Պարսլըն» (Գերմանիա)
«Աթլէթիքօ» (Սպանիա) - «Չելսի» (Անգլիա)
«Լայպցիգ» (Գերմանիա) - «Լիվըրփուլ» (Անգլիա)
«Փորթու» (Փորթուգալիա) - «Եուվենտուս» (Իտալիա)
«Պարսլընան» (Սպանիա) - ՊՍՅ (Ֆրանսա)
«Սեւիլիա» (Սպանիա) - «Պորուսիա Տորտմունդ» (Գերմանիա)
«Աթլասիան» (Իտալիա) - «Ռէյլ» (Սպանիա)

Առաջինը նշուած խումբերը առաջին խաղերը պիտի խաղան սեփական դաշտի վրայ:

«Թոթենհեմը» Վաստակեցաւ 1 Միաւոր Եւ Կը Գրաւ Առաջին Տեղը

Անգլիոյ ախոյեանութեան 12-րդ հանգրուանին Լոնտոնի «Թոթենհեմը» մրցակցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Քրիսթալ Փելասի» հետ: Արձանագրուեցաւ ոչ ոքի՝ 1:1 արդիւնք:

Առաջինը յաջողութեան հասան հիւրերը: 23-րդ վայրկեանին աչքի ինկաւ «Թոթենհեմի» անգլիացի յարձակող Հարի Բեյնը:

Փորթուկալացի Ժոզէ Մուրինյոյի գլխավորած խումբը չաղթանակի առիթը կորսնցուց վերջին վայրկեաններուն սղացած կողի պատճառով: Պատասխան կողը նշանակեց պաշտպան ձեֆրի Շլուպը (Կանա):

«Թոթենհեմը» 25 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը, «Քրիսթալ Փելասը» 11-րդն է՝ 17 միաւոր:



«Լիւերփուլ» Խաղի Վերջաւորութեան Խուսափեցաւ Պարտութենէն

Անգլիոյ ախոյեանութեան 12-րդ հանգրուանին, ախոյեան «Լիւերփուլը» Լոնտոնի մէջ մրցեցաւ «Ֆուլհեմի» հետ եւ բաւարարուեցաւ 1 միաւորով: Խումբերը մէկական կող փոխանակեցին:

25-րդ վայրկեանին աչքի ինկաւ դաշտի տէրերու ճամաքացի կիսապաշտպան Բոբի Ռիդը: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը պարտութենէն խուսափեցաւ վերջին վայրկեաններուն՝ եգիպտացի յարձակող Մոհամեդ Սալահի արդիւնաւէտ կողը 11 մեթրանոցի շնորհիւ՝ 1:1: «Լիւերփուլը» 25 միաւորով երկրորդ տեղը կը գրաւէ:

«Մանչեսթեր Եունայթըտը» Ու «Մանչեսթեր Սիթին» Չպարգեցին Յաղթողին

Անգլիոյ ախոյեանութեան 12-րդ հանգրուանին «Մանչեսթեր Եունայթըտը» «Օլդ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ ընդունեց «Մանչեսթեր Սիթիին»:

Նորուեկացի Ուլի-Գունար Սուլշերի եւ գաթալոնացի Խոսէպ Գուարդիոլայի գլխավորած խումբերը չկարողացան պարգել յաղթողին: Հանդիպումը աւարտեցաւ ոչ ոքի՝ 0:0 արդիւնքով:

Այժմ «Մանչեսթեր Եունայթըտը» ունի 20 միաւոր եւ մրցաշարային աղիւսակի 7-րդ տեղը կը գրաւէ: «Մանչեսթեր Սիթին» 19 միաւորով 8-րդ տեղը կը գրաւէ:

Լուկա Սելարաեանի Երկու Կոլերը «Քոլումպուսին» Օգնեցին Նուաճել ՄԼՍ-ի Տիտղոսը



«Քոլումպուս Քրիւն» նուաճեց ֆուտբոլի ՄԼՍ-ի գաւթը՝ եզրափակիչի ընթացքին 3:0 հաշիւով առաւելութեան հասնելով «Սիեթլ Սաունտըրզի» նկատմամբ: Երկու կոլերու հեղինակ դարձաւ 28-ամեայ արժենթինահայ կիսապաշտպան Լուկա Սելարաեանը, որ աչքի ինկաւ է 25-րդ եւ 82-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով: Երրորդ կողը նշանակեց Հարիթիցի հաւաքականի խաղցող Տերիք Էթիէնը:

Լուկա Սելարաեան դարձաւ եզրափակիչի ամենարժէքաւոր խաղցողը:

«Քոլումպուսը» երկրորդ անգամ ըլլալով նուաճեց ՄԼՍ-ի տիտղոսը: Նախորդ անգամ խումբը նման յաջողութեան հասած էր 2008 թուականին:

Ըմբռանարտի Աշխարհի Գաւաթ Բարձր Ձերմութեան Պատճառաւ Արթուր Ալեքսանեանը Հրաժարած Է Շարունակել Պայքարը

Ռիօ-2016 Օլիմպիական խաղերու ոսկէ մետալակիր, Եւրոպական խաղերու յաղթող, աշխարհի եռակի եւ Եւրոպայի հնգակի ախոյեան Արթուր Ալեքսանեանը (97 կգ) Սերպիոյ մայրաքաղաք Պեկրատի մէջ աւարտին մօտեցող յունահունական ոճի ըմբռանարտի աշխարհի անհատական գաւթի խաղարկութեան մէջ չի կրնար պայքարիլ պրոնզէ մետալի համար:



Յունահունական ոճի ըմբռանարտի Հայաստանի հաւաքականի մարզիչներէն Սամուէլ Գէորգեանը NEWS.am Sport-ի թղթակիցի հետ զրոյցի ընթացքին յայտնած է, որ գիւմրեցի ըմբռն ունի բարձր ջերմութիւն:

«Արթուրն ունի բարձր ջերմութիւն: Անոր ինքնազգացողութիւնը լաւ չէր նաեւ երէկ: Կը կասկածիք, որ ան կարող է վարակուած ըլլալ քորոնայ ժահրով: Բեկրատ մեկնելէն առաջ բոլոր քննութիւն, թեսթ ենք յանձնած, եւ բոլոր պատասխանները բացասական էին: Խումբի մարզչական շտաբը որոշած է Արթուրին թոյլ չտալ գօտեմարտիլ այսօր: Հայաստան վերադառնալէ յետոյ ան դարձեալ թեստ կը յանձնէ», - զրոյցի ընթացքին նշեց մարզիչը:

Դեկտեմբեր 13-ին պայքարի մէջ մտած Արթուր Ալեքսանեանը որակաւորման շրջանին վիճահարոյց մրցավարութեան պայմաններու մէջ 1:5 հաշուով պարտուած էր ռուս Մուսա Եւլուեին, որ նուաճած է եզրափակիչի ուղեգիր: Միակ սիոփիչ գօտեմարտի ընթացքին գիւմրեցի ըմբռն պէտք է գօտեմարտեր պուլկարացի Կիրիլ Միլովի հետ: Միլովը պրոնզէ մետալ կը վիճարկի իրանցի Մոհամադհադի Սարավիի հետ:

Միխայիլ Եւրոպայի Նպաստեց «Ռոմայի» Յաղթանակին

Իտալիոյ ախոյեանութեան 11-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալուած էր «Պոլոնիային»: Խաղի բոլոր կողերը արձանագրուեցան առաջին խաղակէսին երբ արդիւնքը դարձաւ 5:1՝ ի նպաստ «Ռոմայի»:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխայիլեանը առաջին խաղակէսին նշանակեց մէկ կող ու կատարեց մէկ կողային փոխանցում:

Հենրիխ Միխայիլեանը «Պոլոնիայի» դէմ հանդիպման լաւագոյն խաղացողի կոչման չորս հաւակնորդներէն մէկն է:

«Միլանը» Խուսափեց Պարտութենէն Երնանտեսի Երկու Կոլերուն Շնորհիւ

Իտալիոյ ախոյեանութեան 11-րդ հանգրուանի ընթացքին «Միլանը» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Փարմայի» հետ: Արձանագրուեցաւ ոչ ոքի՝ 2:2 արդիւնք: Յաւանաբար պարտութենէն խուսափեցաւ ֆրանսիցի պաշտպան Տէօ Էրնանտեսի երկու կոլերուն շնորհիւ:

«Միլանը» ընթացիկ ախոյեանութեան ընթացքին տակաւին պարտութիւն չէ կրած եւ 27 կէտով կը շարունակէ գլխավորել մրցաշարային աղիւսակը՝ երկրորդ տեղը ընթացող «Ինթերի» նկատմամբ ունենալով 3 միաւորի առաւելութիւն: «Փարման» 14-րդն է՝ 11 միաւոր: